

Մ Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



Ս. Իրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին ներհամաւոր՝ կողմնակի :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՐՈՒՍԱՆԷՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ԻՂ. ՏԱՐԻ — ՆՈՐ ԵՐԶԱՆ 1950 Վ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

երես

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Հ. Բ. Ը. Մ.

37

ԿՐՕՆԱԿԱՆ

— Կրօնի ծագման մասին փոխակերպականներու տեսութիւնը.

Ե.

40

— Հոգեւոր կեանք եւ անոր զարգացման ազդակները.

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

44

ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ

— Վարդանանց.

ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ

49

— Անտունի.

» » » »

50

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Երուսաղեմի Յունաստառ-Հայերէն ծածկագրի վերամշակութիւնը.

ՊՐՈՖ. Ա. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

51

— Բնագրական հանի մը սրբագրութիւններ Մասթուս Ուռնայեցիի «Ժամանակագրութեան» մէջ եւ Չմեկիկի կողմէ Առօս Ողորմածի ուղղութեամբ համակին վերջաբանը.

ՀԱՅԿ ՊԷՐՊԷՐԵԱՆ

54

— Նորայրեան Նամականի.

Ս. ԼՕՐԱԼԼԻ

58

ՔՆՆԱԴՆԱԿԱՆ

— Ֆրանսական քննադատութեան երեք սիւները.

Ամիսիեց

ՊԱՐԴԵՒ ՏԷՐ ԳՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

62

ԼԵԶՈՒԱԳՈՒՄԱԿԱՆ

— Հայերէնի բարբառները.

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

64

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

— Ամսօրեայ լուրեր.

67

ՏԻՐՈՒՆԻ

— Հանգիստ Բարձր. Տ. Կարապետ Արեւայ. Թումանեանի.

68

Բ Ա Յ Ն Ե Ղ Ի Ն

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 10

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՀԱՍՅԷԻՆ

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻՊ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1950

≡ ՓԵՏՐՈՒԱՐ ≡

ԹԻԻ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հ. Բ. Ը. ՍԻՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Միութեան ծնունդը եթէ մեր պատմութեան հոյակապ էջերէն մին կը կազմէ, իր չուրջ կիսադարեան գործունէութիւնը, բազմաբարեք չափերով իրագործուեցաւ մեր ժողովուրդի կեանքին վրայ: Նմանօրինակ ուրիշ ոչ մէկ ազգային հիմնարկութիւն թէ իր գոյութեամբ և թէ արգասիքներով, չէ կրցած հաւասարիլ առողջ ու բեղմնաւոր կենսունակութիւն ունեցող այս «Փոքրիկ հանրապետութեան», ինչպէս կը սիրէր ըսել անոր երիցս երանեալ հիմնադիրը:

Հ. Բ. Ը. Միութեան մօտ կիսադարեան յղացքը, ամբողջութեամբ իրագործուած տեսնել կարենալու համար, անհրաժեշտ է դար մը ետ երթալ մեր օրերէն, կարենալ կշռելու համար այն մեծ ճիգը՝ զոր մեր ժողովուրդը մէջտեղ դրաւ ժԹ. դարու կէսերէն իսկ, ժամանակին յարմարելու, ինքզինքը նորոգելու և իր գործունէութիւնները դնելու ազգային գիտակցութեան սեղանին:

Այդ ճիգը կը տարածուի իր կեանքի բոլոր երեսներուն վրայ: Բարձրագոյն կրթութեան դպրոցներու ցանցը, ընկերային գետնի վրայ մեր ստեղծած օրէնսդրական կազմակերպութիւնները, մամուլի և զրականութեան շնորհիւ մեր արուեստի զգալարանքին կազմաւորումը, մեր յեղափոխիչ շարժումները, արդիւնքներն էին մտքի այդ ճիգին: Բոլոր այս ձեռնարկները ժամանակին հետ ծնած՝ կը ձգտէին գոհացնելու մեր ժողովուրդի բազմերես պէտքերը: Հակառակ այսքան լայն բռնուած ճիգերուն՝ Ի. դարու սկիզբը մեր ժողովուրդը աւելի դժբախտ է քան երբեք. երբ ինչուն կը հարցնենք, մեր հողին մէջ արցունքներ կը բացուին, երբ աչքերնիս կը դարձնենք մանաւանդ Թուրքէն շուրջ դար մը առաջ ազատագրուած ժողովուրդներու արդի համեմատօրէն բարգաւաճ վիճակներուն: 1900ին ազգին հողին մէջ ամենէն խոր յուսահատութիւնը կը տիրէ, և ազգին վերին խաւը կը մտածէ նոր իրագործումներու, մեր ցաւերուն իբրև սպեղանի:

1906ին եզիպտոսի մէջ սպայակոյտ մը մտաւորականներու, յաւէտ անմոռաց Պօղոս Նուպար փաշայի զլխաւորութեամբ, հիմը կը դնէր նոր գաղա-

փարաբանութեան մը, ատիկա Հ. Բ. Ը. Միութեան ծրագիր ձեռնարկն էր: Կրկին էր արժէքը այս հաւաքական ձեռնարկին, մեր ազգային իրականութեանը մէջ, բարոյական և նիւթական: Բարոյական՝ վասնզի այսու ազգին ունեւոր դասակարգը ոչ թէ քմահաճոյքով, այլ ի պարտաւորութենէ մերձեցումը կ'ընէր ազգին վերքերուն և կարիքներուն. իսկ իբրև նիւթական ձեռնարկ՝ օգնութեան կամ նպաստի աննախընթաց կազմակերպութիւնն է ան մեր մէջ, 45 տարիներէ ի վեր միշտ աւելի արդիւնաւորուած, որուն նախախնամական դերի մասին որևէ վարանք ներքիլ պիտի չըլլար ունէ հայուն՝ որ ունի իր ազգին հպարտութեան զգացումը:

Միութիւնը, իբրև կազմակերպութիւն և յաջողութեամբ, շատ բան կը պարտի անտարակոյս իր հիմնադրին, որ մեր վերջին դարու պատմութեան մեծագոյն դէմքերէն է, ծնունդով՝ ազնուական, բարձրօրէն դաստիարակուած, միշտ հանրային օգուտին միտող և ազգային ու կրթական ձեռնարկներու մեծ մեկնասան ու ղեմաւորողը: Իսկ մեր քաղաքական կեանքի գեանին վրայ՝ նոր օրերու Իսրայէլ Օրին, Շահմիրեան և Էմինը եղաւ, սակայն մեր ողբերգութիւնը աւելի մեծ էր քան ունէ գերազանց խելք և միտք:

Գաղափարներու զուգորդութեամբ, երբ համեմատութեան բերենք համաշխարհային նման երկու խոշոր կազմակերպութիւնները, Ալիանս Ֆրանսէզ և Ալիանս Իզլայէլիք Ինիւլէրսիւ, մերինին, որոնցմէ միոյն ետև զօրաւոր պետութիւն մը կայ, իր մեծ մշակոյթով և միջոցներով, և միւսին՝ ամբողջ աշխարհի դրամը, մինչդեռ մերը քամուած և ուժասպառ ժողովուրդ մը իր պզտիկ տնտեսութիւններով միայն կազմուած, այն ատեն միայն կը զգանք թէ Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիրները և վարիչները տարօրէն կարող անձնաւորութիւններ պէտք է եղած ըլլան, այս ժխտական վիճակներէն կարենալ ստեղծելու այսօրուան բարգաւաճ և ազգին պատիւ բերող Հ. Բ. Ը. Միութիւնը: Կէս դար վերջ՝ երբ կը նայինք իր շքեղ արդիւններուն և կազմակերպած ու մատուցած բարիքներուն, կ'ըսենք իւրովի, թող օրհնուի յիշատակը բոլոր անոնց՝ որոնք ջանացին որ գոյութեան զայ բազմաբարիք այս Հաստատութիւնը: Չեղաւ աղէտ մը որուն չհասնի, չեղաւ կարիք մը, տնտեսական ու կրթական, որուն իր իշխանական բաժինը չբերէր Հ. Բ. Ը. Միութիւնը:

Բարեգործականը միայն չզանձեց, այլ իր զանձուհիները կազմակերպեց նորագոյն թեքնիքով, բազմապատկելով զանոնք շահագործման նոր մեթոտներու համաձայն: Այսպէս՝ իր գործունէութեան մէջ կը համադրուէին հին և նոր ձեւերը, այսինքն Բարեգործականը կը կատարէր, աղքատախնամի, կտակաւորի, և պանքայի դերերը միանգամայն:

Միութիւնը առատօրէն նպաստած է ու կը նպաստէ հայ ժողովուրդի շինարարական ձեռնարկներուն: Դաստիարակած և ինքնապահ աշխատանքի վարժեցուցած է հայ որբն ու անօքը: Եղբայրական օգնութեան ձեւք կարկառած է ու կը կարկառէ Սփիւռքի մեր բոլոր զաղութներէն ներս, ինամակալի և պաշտպանի դեր ստանձնելով անոնց նիւթական, բարոյական և տնտեսական վիճակներուն: Նպաստած է լայնօրէն ներգաղթին, հայթայթելով այդ շարժումով պայմանաւոր բոլոր կարիքները: Կրթական ցանցեր տարածած է մեր բոլոր զաղութներուն մէջ, և ստեղծած երիտասարդական կազմակերպու-

Թիւններ՝ սատար հանգիստանալով անոնց մտաւոր ու բարոյական ուժերու զարգացման: Վասնզի Հ. Բ. Լ. Միութիւնն ու անոր իմաստուն յանձանձիւներն ու ղեկավարները կը հաւատան թէ՛ լաւ պատրաստուած անհատ մը խմորն է իր ժողովուրդի ապագային:

Հ. Բ. Լ. Միութիւնը պատմութեան չէ անցած. անիկա իր զործունէութեան ամենէն տաք և բախտորոշ օրերն է որ կ'ապրի: Այսօր արտասահմանի բոլոր կեդրոններուն մէջ իր ստեղծած նիւթական, բարոյական ու կրթական բլիթները և անոնց յառաջանայեաց նպատակները միայն պատիւ կրնան բերել ազգապարծան այս Հաստատութեան:

Արդարև, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան երկարատև և ժրջան գոյութիւնը նոր և փայլուն մէկ ապացոյցն է մեր ցեղին կենսունակութեան, այն անսպառելի ուժերուն որ բուն իսկ անոր արմատին մէջ, են այն կորովին և հաստատամտութեան, որոնք կը յատկանշեն մեր ամբողջ ժողովուրդը:

Պաղեստինի աղէտին հետեւանքով, Երուսաղէմի Ս. Աթոռին և անոր պաշտպաններէն ներս ապաստան գտած մերազն ժողովուրդի տնտեսական դժնդակ կացութեան համար արտասահմանի հայութիւնը ամենուրեք կատարեց իր եղբայրական օգնութեան պարտքը, սակայն Հ. Բ. Լ. Միութեան իշխանական և լիաբուն նուիրատուութիւններն ու փոյթը, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան տարեգրութեան մէջ պիտի մնան միշտ ոսկի տառերով արձանագրուած. իսկ անոր հովանիին տակ ապրող Պաղեստինի աղէտահար հայ ժողովուրդի երախտագիտութեան առջև, սրտառուչ և յաւէտ անմոռաց բարիք մը:

Այս առիթով Ս. Յակոբեանց զինուորեալ Միաբանութիւնը իր ջլատուած, բայց հաւատարմարժ ու քաջակորով ժողովուրդով, երախտագիտական իր արցունքներուն հետ միասին ազգապարծան այդ Միութեան բարերարներուն և բարիքը յանձանձողներուն կը բերէ իր երախտագիտական սրտազին հաւաստիքը:

Օրհնէնք անմոռաց՝ Հ. Բ. Լ. Միութեան, Երուսաղէմի աղէտահար մեր ժողովուրդէն, որդեկորոյս մայրերէն, ծնողագուրկ որբերէն, զերեզմանամերձ ծերերէն, ստնդեաց մանուկներէն, և առհասարակ, անզործ և շուարած, բայց երախտազէտ պաղեստինահայ հասարակութենէն:

Թող հազար ապրի ազգապարծան մեր այս Միութիւնը, որպէսզի որքան ատեն որ տառապանք և տառապողներ գտնուին, վայելեն իր սէրն ու խնամքը, և մեզի հետ յաւերժական օրհներգուն ըլլան իր անունին, զայն ստեղծողներու անմոռաց յիշատակին, Միութիւնը միշտ կենսունակ պահողներու կեանքին: Որքա՛ն տեղին է խօսքը արեւելքի մեծ մտածողին, բարիքը չէ որ մարդս կը մեծցնէ, այլ մարդն է որ կ'արժեւորէ ու կը մեծցնէ բարիքը:



ԿՐՕՆԵԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

ՓՈԽԱԿԵՐՄԱԿԱՆՆԵՐՈՒ (Transformiste)

ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Կախում եւ Ազատութիւն. — Ասոնք են երկու բեւեռները մեր կեանքին, որ առողջ և բնական է այն ատեն միայն, երբ ասոնք կրնան միանալ: Ինքզինքնիս կախեալ նշկատելով մեր Աստուծէն, կը հաստատենք մեր աւարամի, վիճակը: Որչափ աւելի ճանչնանք ինքզինքնիս, այնքան աւելի կը հասկնանք թէ մենք մեզմէ ոչինչ ենք, և թէ ինչպէս մեր մարմինն՝ նոյնպէս մեր հոգին համար. ամէն միջոց կրօնէն կու գայ մեզի: Մեր կողմէն մեր ազատութիւնը հաստատելով Աստուծոյ հանդէպ, կը յայտարարենք մեր բարոյական աւարամի արժանապատուութիւնը: Որքան ալ տկար ըլլանք, մեր կեանքը զմեզ չըջապատող երեւոյթներու պարզ հետեւանքը չէ, մինչև իր կախումին մէջ անգամ, եսը գիտէ թէ իր տէրը ինքն է: Աստուած կրնայ իր զօրութեամբը ջախջախել զայն, բայց եսը գիտէ թէ Աստուած անգամ պիտի չկրնար բռնադատել զինք: Եսը է ինչ որ է, վասն զի ինք այդպէս կ'ուզէ ըլլալ, ինքն է իր ճակատագրին գործաւորը. այդ է իր վեհագոյն փառքը, արքայական թագը՝ որմէ ոչինչ պիտի կրնայ զրկել զինքը երկրի վրայ: Կ'աւելցնեմ թէ կախումն ու ազատութիւնը եսին, իր ամբողջութեանը մէջ գործելութեան կերպերն են: Երկու հոսանքներ են ասոնք, որ կը զրգռեն մեր անձնական կորովները, զգացումները, կամքը և իմացականութիւնը: Արդ, հոգեւոր յատկաւորութեան գիտակցութիւնը մին է ծանօթութեան այն տուեալներէն, զորս ունինք մենք մեր մասին: Ազատութիւնն և կախումը մեզի կ'երեւին այսպէս իրրեւ փափաքը մեր անձնական գործունէութեան, Յաճախ սակայն փրկիսփայտութիւնն ու աստուածաբանութիւնը իրարմէ զատած են այս երկու եզրերը, ինչպէս անշատաժ

են նաև ծանօթոյքները կրօնի և բարոյականի, փոխանակ միացնելու զանոնք:

Այսպէս առանձնաբար առնուած, մեր անձին մասին՝ իրր կրօնական էականներու նկատմամբ՝ մեր ունեցած ծանօթութիւնը կը համապատասխանէ մեր կախումի յատկաւորումին, ինչպէս այլամերժօրէն բարոյական գիտակցութիւնը արտայայտութիւնն է մեր ազատութեան: Այսպէս է գոնէ որ զրաժ են հարցը ժամանակակից Գերմանիոյ երկու նշանաւորագոյն խորհողներէն՝ Շլէյրմախէր, կրօնական զգացումին վրայ իր տեսաբանութեան մէջ, և Բանդ՝ բարոյական իրականութեանց իր նկարագրութիւններով: Գիտենք արդարեւ թէ առաջինին dogmatique-էն մեկնակէտն է բարեպաշտութեան ուսումնասիրութիւնը, մինչդեռ երկրորդին գործնական բանին քննադատութիւնը ամէն բանէ առաջ բարոյականութեան վերլուծութիւնը կուտայ: Անօգուտ չըլլար արագ ակնարկի մը մէջ ամփոփել այս տեսութիւնը:

ա) Կրօնական գիտակցութիւն, կամ բարեպաշտական երեւոյթներ. — Մարդկային զարգացումը երեք աստիճաններէ կ'անցնի, որոնք են զգացում, գիտութիւն և գործ. բարեպաշտութիւնը բնորոշող գիծը չենք կրնար վերջին երկուքին մէջ փնտռել: Բարեպաշտութիւնը չի կրնար գործն ըլլալ ծանօթութեան, վասնզի այն ատեն մարդուն գիտութիւնը պիտի ըլլար իր կրօնական տրամագրութիւններուն չափը, ինչ որ չի կրնար ենթադրուիլ: Բարեպաշտութիւնը չի կրնար նոյնպէս շփոթուիլ գործին հետ, վասնզի այս վերջինին արժէքը ճշտող բանը անոր նիւթական արդիւնքն է, մինչդեռ բարեպաշտական արարք մը ամենէն աւելի կախում ունի զինքը թելադրող գիտաւորութենէն: Ուրեմն բարեպաշտութիւնը մարդուն զգացումին կամ գիտակցութեան մէկ յատկաւորումն է: Այս է՝ իր իսկական նկարագիրը, այս է՝ աղբիւր, ուսկից դուրս կուգայ ան, կենդանացնելու համար ամէն ինչ որ ձեռք կը բերէ գիտելութեան (savoir) կամ գործնական կեանքի միջոցաւ:

Միւս կողմէ սակայն, մեր ներքին բեւեռներուն ոլորտը այնքան լայն է, որ հարկ կ'ըլլայ մեզի՝ ճշտել թէ որն է ինքնատիպ այն գիծը, որով բարեպաշտութիւնը կը զանազանուի որ և է ուրիշ զգացումէ:

Շլէյրմախէր կը պատասխանէ ասոր՝ ըսելով թէ այդ գիծը «այն է որ մենք մեր մասին գիտակցութիւն ունինք իրրեւ բացարձակապէս կախում ունեցող էակներու մասին. կամ ինչ որ նոյն բանն էր թէ մենք գիտակցութիւն ունինք Աստուծոյ հետ մեր ունեցած յարաբերութիւններու մասին»։ Բայց ինչ բանի մէջ կը կայանայ բացարձակ կախումի այն զգացումը։ Մեր կեանքին մէջ, կ'ըսէ ան՝ բացատրելով այս կէտը, երկու ուղղութիւններ կը գծագրուին. կրաւորութիւն (réceptivité), որով կ'ենթարկուինք մեզ շրջապատող միջավայրին ազդեցութեանը, և ակտիւութիւն (activité), որով մենք ալ մեր կարգին անոնց վրայ կ'ազդենք։ Զմեզ շրջապատող աշխարհին հետ մեր ունեցած յարաբերութիւններու մէջ, այս երկու հոսանքները իրարու խառնուելով կը կազմեն այլազան բաղադրութիւններ, որոնք երեք անջատ վիճակներու կը յանգին։ Առաջին աստիճանին մէջ, եսը տակաւին չզգար բնութեան հանդէպ իր գիմագրութիւնն. անգիտակցութեան վիճակն է այն, կամ «անասնական շփոթ գիտակցութիւնը»։ Երկրորդ աստիճանին մէջ, եսը ներհակութեան վիճակի մէջ կ'ապրի, բնական տիեզերքին հետ իր յարաբերութիւնները կախումի և ազատութեան խառնուրդ մըն են. «զգալի գիտակցական վիճակն է այն»։ Երրորդ վիճակին մէջ վերջապէս հակադրութիւնը բոլորովին անհետացած է։ Եսը ինքզինքը նոյնացած կը համարի, զինքը շրջապատող ամէն բանի հետ, և, իր շրջապատին հետ Աստուծոյ բացարձակ կախումի կ'ենթարկէ ինքզինքը։ — Գործելու այս կերպը թէև այսպէս երկրորդէն կը սերի, բայց կը գլէ զայն։ Բացարձակ կախումին զգացումէն կ'ենթադրէ զգալիին գիտութիւնը։ Ոչինչ չի կըրնար՝ տիեզերքէն անջատարար՝ Աստուծոյ անձնատուր ըլլալ անվերապահօրէն։ Մարդ՝ իրրեւ աշխարհի յարակից մէկ մասն է որ կ'ենթարկուի գերագոյն պատճառին. ուստի կրօնական զգացումը ընկերութեան մը մէջ միայն կրնայ աճիլ, ու Եկեղեցին է կրօնական զգացումին այդ հասարակութիւնը կամ ընկերութիւնը։ Եթէ հետեւինք պատմութեան զարգացումին, պիտի տեսնենք արդարեւ թէ մեզքը խանգարած է կրօնական ընկերութիւնը։ Բայց մարդը ըստ ինքեան,

կրկնակ կարողութեամբ օժտուած է, թէ՛ Աստուծոյ հանդէպ այդ զգացումը ունենալու, և թէ՛ ուրիշներու հաղորդելու զայն, ինչ որ իր բնածին կատարելութիւնը կը ցուցնէ։ Բարեպաշտութիւնը ուրեմն մեր բացարձակ կախումին գիտակցութիւնն է, ու մարդ որքան աւելի կ'իրականացնէ այս տրամագրութիւնը տիեզերքի բարի յարաբերութիւններու մէջ, այնքան աւելի ներուժ է իր կրօնական կեանքը։

Որքան աւելի զգայ իր կախում ունենալը՝ այնքան աւելի բարեպաշտ է. — Այս է, քանի մը բառով, ներկայացումը այս իմացումին, որուն վրայ կ'աւելցենք հետագայ երկու գիտողութիւնները։

10. Այս տեսութեան մասին յաճախ առարկութիւններ եղած են։ Շլէյրմախէրի սահմանումը շատ անձուկ է ըսած են, բարեպաշտութիւնը կախումի բնազդ ըստաւ՝ թէն շատ աւելին է, անոր մէջ կան տակաւին երախտագիտութիւն, յոյս, վախ, ուրախութիւն և սէր։ Այս գիտողութիւնը տեսակէտով մը թէև ճիշտ, բայց՝ յընդհանուրն՝ բացատրութեան կերպ մըն է միայն, որ անգամ մը ևս կը հաստատէ թէ բարեպաշտութիւնը ամէն բանէ առաջ կախումի յատկաւորում մըն է միայն։ Ամէն անգամ որ հակառակ կը վարուինք Աստուծոյ, մեր բարեպաշտութիւնը կը վիրաւորուի. ամէն անգամ, ընդհակառակն, որ ինքզինքնիս կ'ենթարկենք Աստուծոյ կամքին, ուղիղ ճամբուն վրայ կը զգանք ինքզինքնիս և ուրախութիւն կը զգանք ասոր համար։ Այս կախումին իրականացումը ուրեմն բարեպաշտութեան էական գիծերէն մին է, և կրնանք երկու բառերը նոյնացնել իրարու հետ։ Ուստի, բարեպաշտութիւնը յատկաւորումն է ինքզինքը Աստուծոյ կախումին տակ դնող եսին։

20. Ընդունելով թէ այս այսպէս է, կը մնայ հիմակ հարցնել թէ ո՞րն է այս տրամագրութեան հոգեբանական կայանը։ Շլէյրմախէր ասոր կը պատասխանէ, անցնելով բանականութեան և արտաքին գործունէութեան վրայէն, և կանգ առնելով զգացումին առջև միայն, դադափար որուն անկատար և այլամերժ բնոյթը քանիցս ցուցուած է սակայն։ Էսպէս, միայն ըզգացումի եղանակաւորումը չէ բարեպաշտութիւնը, անիկա ամբողջ մեր էութեան

յատկաւորումն է: Բարեպաշտութիւնը ըզ-
գացող, խորհող, և կամեցող եսն է ան. իր
կորովներուն և կարողութիւններուն լիու-
թեան մէջ եղող եսը՝ այս կ'իրականացնէ
Աստուծոյ հանդէպ բացարձակ կախումի իր
յարաբերութիւնը: Այս է ահաւասիկ այն
իմաստը, զոր պէտք է ունենայ կրօնական
գիտակցութիւն բառը իբրեւ ծանօթութիւն
զոր ունինք մեր անձերու և Աստուծոյ
հետ մեր յարաբերութիւններու մասին:

Բայց ինչ վերապահումներ ալ ընենք
մանրամասնութեանց հանդէպ, պէտք է
ընդունինք թէ Շլէյրմարխերին է պատիւը
հաստատելու թէ, Քրիստոսի աշակերտին
համար կրօնական այս յատկաւորումը նա-
խաւոր իրողութիւն մըն է, փորձառական
ստուգութիւն մը: Երբ ինքզինքնուս մէջ
մտնենք, մենք զմեզ կախուած պիտի
զգանք մեր Աստուծմէն: Երբ աչքէ ան-
ցընենք մեր կեանքը, իր բոլոր դէպքերով
միասին՝ Աստուծային կամքին կ'ընծայենք
անոր պատճառը: Ու ոչ միայն այդպէս կը
զգանք, այլ նաեւ այդպէս կը կամինք.
մենք մեզէն արարքով մըն է որ կ'իրա-
կանացնենք կախումի այս վիճակը: Կը
պարպենք սիրտերնիս որպէսզի Աստուծո
իր ներկայութեամբը լեցնէ զայն: Կը տեւ-
ջանք ինքզինքնիս ազատել այս բոլոր պատ-
ուարներէն՝ որոնք զմեզ կը բաժնեն մեր
երկրաւոր հորմէն, ի Յիսուս Քրիստոս: Տոր-
չափ արգելք մը կայ, մեր բարեպաշտու-
թիւնը կը յուզուի, դժգոհութիւն կը զգայ,
ու զմեզ կը հարկադրէ միշտ աւելի յառա-
ջանալ զոհողութեան ճամբուն վրայ: Աւե-
լին կայ, եթէ ինքզինքնիս անձնապէս կախ-
եալ յայտարարենք Աստուծմէ, ոչ նուազ
հրամայական պէտք մը զմեզ կը մղէ փա-
փաքելու որ այս բանին մէջ մեզի ընտելա-
ցընենք մեր շուրջը եղողներն ալ: Անհա-
գիստ ենք ցորչափամբողջական կերպով Աս-
տուծոյ յանձնուած չենք մեր սիրելիներու
հետ միասին: Կարելի է նոյնիսկ ըսել թէ
որչափ աւելի ընդարձակուի մեր բարեպաշ-
տութիւնը, կախումի այս յատկաւորումին,
այնքան աւելի կը տարածուի բոլոր մեր ի
Քրիստոս եղբայրներուն, և աւելի ևս բո-
լոր մարդոց վրայ: Այս վերջինները այլևս
կղզիացեալ մեկնութիւններ չեն թուիր մե-
զի, ամէնքը մեզի կ'երեւին Գերագոյն
կամքէն պարտուած, ամէնքն ալ Աստուծա-

ծային զօրութեամբ միայն կ'ապրին, անձ-
նաւորութեան սահմանագիծերը կը ջնջուին
կերպով մը, Աստուծոյ անդիմադրելի զոր-
ծունէութեան միայն տեղ տալու համար:
Այս է ահա բարեպաշտութիւնը, զոր մեզի
կը ցուցնէ քրիստոնէական փորձառութիւ-
նը, արդ եթէ մենք Քրիստոնէութեան հա-
մեմատ դատենք կրօնները, անպատճառ
անոնց ևս պիտի պատշաճեցնենք այս նը-
կարագիրը, որ այս պատճառաւ տիեզերա-
կան պիտի թուի մեզի, մարդուն ճակատա-
գիրը Աստուծմէ կախում ունենալուն մէջն
է: Վասնզի այս է որ կը հաստատէ այն ի-
րողութիւնը թէ Քրիստոս, կատարեալ մարդ
Աստուծո ինքնարկուած է անվերապահօրէն
(Յովհ. Ե. 19): Ուրիշ բացերով, քրիստո-
նէական գիտակցութիւնը, որ յաղթական
կը կանգնի մեզքին աւերակներուն վրայ,
մարդուն և իր Աստուծուն միջև կ'ենթա-
դրէ այս բաղկացուցիչ յարաբերութիւնը,
զոր չարին պատճառած խանգարումն ան-
գամ պիտի չկրնար հեռացնել մեր տեսու-
թենէն: Այս է ահա փորձառական ապա-
ցոյցը, որուն ճշգրտութեան համար Քրիս-
տոսի մէն մի աշակերտը պէտք է խորհուրդ
հարցնէ իր սեպհական զննութիւններուն:
Կ'աւելցնեմ դեռ թէ այս արդիւնքն է որ
կը հաստատեն, թէ հեթանոս ժողովուրդ-
ներու կրօնական պատմութիւնը, և թէ՛
մանաւանդ Ս. Գրոց վկայութիւնը: Իրօք,
Աւետարանը մեզի կ'առաջարկէ կատարե-
լապէս ենթարկել ինքզինքնիս Աստուծմէ՝
կախումի: Յիսուսի ուսուցումին համեմատ
միթէ զմեզ մեր Փրկչէն և Յիսուս Քրիս-
տոսով Աստուծոյ միացնող հաւատքը գե-
րագոյն հրաժարումի այս արարքը չէ՞: Այս
տեսակէտով աւելի մանրամասն, աւելի
հանուր և վճռական է առաքելին վար-
դապետութիւնը. որուն համեմատ Աստուծո
է բոլոր էակներուն գոյութեան պատճառը,
որով կ'ապրին ու կը շարժին ամէնքը
(Գործք Ժ. 28, Սաղմ. ԾԴ. 29, 30, ԾԼԹ.
7 և այլն): Եթէ մեղաւորը ուղէ թօթափել
հպատակութեան այդ լուծը, անիկա ա՛լ
աւելի կը ծանրանայ իր վրայ, քան նոյն
իսկ ինչ որ կը զգայ իր հաւատացեալի
կեանքին մէջ: Աստուծոյ վիհագոյն կամքն
է որ կը տնօրինէ փրկութեան գործը իր
ամբողջութեանը և իր բոլոր զիմայեղում-
ներուն մէջ (Հովով. Ը. 29, 30): Քրիս-

տոնեան ըստ ինքեան անգոր է որ «մեռեալ» է ինքը, ըստ Պողոսի ու իր կեանքը փրկական շնորհաց պարզեւ մըն է միայն (Հովով. 2, 3 և այլն, Գաղ. Բ. 20): Մեր սեպհական միջոցներովը մենք անկարող ենք որեւէ որոշում առնելու կամ գործ կատարելու, մեր ամբողջ կեանքը, և անոր ուղղութիւն տուող զրդապատճառներովը, Աստուծոյ ամենակալ ձեռքերուն մէջ ենք մենք (Փիլիպ. Բ. 13):

Աւետարանը միայն, ապահովաբար, մեր մէջ կ'իրականացնէ կախումի այսպիսի վիճակ մը: Բայց այս պէտքը, այնքան արմատացած է մարդուն գիտութեան մէջ, որ անիկա զօրեղապէս երեւան կուգայ, այլազան ժողովուրդներու կրօնքներու և փիլիսոփայութիւններուն մէջ: Վայրենին իր սահմանափակ հասկացողութեամբ ինքզինքը պարտուած կը զգայ այս զօրութենէն, զոր կը փնտռէ և կը պաշտէ՝ առանց զայն ճանչնալու: White զոր օրինակ, խօսելով Նոր Զեւանտայի ցեղերու մասին, ձերուկի մը հետեւեալ խօսքերը կը ներկայացնէ, «Միթէ ամէն բան աստուածներէն է ելած, միթէ աստուած մը է՞՞ ձուկը, որ ջուրին մէջ է մտած, և զոր դուք կ'ուտէք, միթէ աստուածները ոգիներ չեն, ինչո՞ւ համար ուրեմն էք վախնար ձեր կերածէն»: Հոս, Աստուածայինը կը ներկայանայ հոգիներու բաղմութեան ձեւին տակ, այսինքն այնպիսի նուրբ տարրի մը, որ ամէն բանի մէջ կրնայ թափանցել, ոչ ոք պիտի կրնայ խուսափիլ անոր պարսպատումէն: Աւելի նշանաւոր է այս իրողութիւնը զոր Steinhouser միտիոնարը կը պատմէ Գոթ տ'ըտեամ ափրիկեցիի մը մասին, որ ծանօթութեւն ունի գերագոյն Աստուծոյ, և զայն կը ներկայացնէ երկնակամարին հետ, անոր համար ըսելով սրտայոյզ պարզութեամբ մը, «Իր ձեռքին մէջ եմ ես»: Նոյն այս համոզումն է որ կ'արտայայտուի մանաւանդ Հնդկաստանի ժողովուրդներու կրօններու մէջ: Մանուի Օրէնքները կը պարունակեն զոր օրինակ, սա խորունկ խօսքը, «Տիեզերքը վեհագոյն հոգիին մէջ կը հանգչի, հոգին է որ կ'արտադրէ ոգեւոր էակներու կատարած գործերու շարքը»: Արդարեւ, կը գոչէ այլուր հինգու իմաստունը, ձեր կինը է որ կը սիրէք ձեր կնոջ մէջ, երբ կը սիրէք ձեր կինը, Ազմանն է որ կը սիրէք ձեր կինը

սիրելով: Արդարեւ ձեր դաւակըն է որ կը սիրէք ձեր դաւակին մէջ, Ազմանն է որ կը սիրէք, սիրելով ձեր դաւակըն: Արդարեւ, հարստութիւնը է որ կը սիրէք հարստութեան մէջ, Ազմանն է որ կը սիրէք, սիրելով հարստութիւնը: Արդարեւ աշխարհները է որ կը սիրէք աշխարհներու մէջ, Ազմանն է որ կը սիրէք, սիրելով աշխարհները: Ըստ այս յայտարարութեան, Աստուածութիւնը իրերուն գոյացութիւնն է որ կը ներկայացնէ, և որ կը պարպէ իր սիրտը որպէսզի Աստուածայինը լեցնէ զայն, կը ստանայ տիեզերքի բոլոր բարիքները: Ասո՞ր համար է որ բանաստեղծը կ'աղաղակէ խորհրդապաշտ մտաքանդութեամբը. «Տէվանները, որոնք Պրահմայի աշխարհին մէջ են, կը պաշտեն այդ Ազմանը, . . . անոր իշխանութեան ներքեւ են բոլոր աշխարհները, և բոլոր հաճոյքները: Ով որ կը ճանչնայ Ազմանը և կը հասկնայ զայն, կրնայ ունենալ բոլոր աշխարհները և ինչ որ կը փափաքի»:

«Աստուծոյ ցեղէն ենք մենք կը գրէ արդէն Եպիկտիտոս, Ա. դարուն, չկայ մեր մէջ շարժում մը որուն գիտակից չըլլայ Աստուած. անոր համար բաց են բոլոր սիրտերը, յայտնի են բոլոր ըղձանքները, երբ կը խօսինք, կը քալենք կամ կ'ուտենք, սոյնպէս մեր մէջն է ինքը միշտ, որ իր սրբարանը՝ իր զօրութեան գործօն մարմնացումն ենք մենք»: Այս զանազան մէջբերումներէն, որոնց թիւը կրնայինք տակաւին երկարել, դուրս կուգայ Աստուծոյ բացարձակ կախումի մը գաղափար միայն: Կախում ֆիզիքական, մարդն ու տիեզերքը Աստուածային գոյացութեան մէջ են: Իմացական և բարոյական կախում, մեր շարժումներն ու խորհուրդները Աստուծոյ գործունէութեան արդիւնք են: Ընդհանուր պէտք մըն է ուրեմն որ մարդը կը մղէ ոչնչանալ Աստուածային էակին առջև՝ զոր ինքը կը պաշտէ (հմտ. Գործք ԺԷ. 23), և քաշուիլ մեկուսանալ գործօն զօրութեանը, Աստուած միայն, որ միայն կը լեցնէ տիեզերքը ներկայութեամբը կամ, ըստ յատկանշական բացատրութեան առաքեալին, ան լինի «ամենայն յամենայնի» (Ա. Կորնթ. ԺԵ. 28):

(Շարունակելէ՝ 4)

Ե.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԱՆՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ

Հոգեւոր կեանքի զարգացման ազդակներու մասին արտայայտուելէ առաջ՝ կ'արժէ գիտնալ թէ ի՞նչ է հոգեւոր կեանքը: Խնդրոյն բացասական կողմին առաջնութիւն տալով կրնանք հարցնել թէ ի՞նչ բաներ հոգեւոր կեանքի չեն:

Նախ՝ մտային զարգացումը հոգեւոր կեանք չէ: Մարդիկ կան որոնք մտքով զարգացած են, և նոյն իսկ եկեղեցագիտական ու կրօնագիտական ճիշդերու մէջ հմտութիւն ունին, ու հոգեւոր իրականութիւններու հանգէպ գաղափարներ ալ կը յայտնեն, առանց սակայն հոգեւոր կեանք ունենալու: Մտային զարգացումը կրնայ անհատը հոգեւոր կեանքի առաջնորդել, բայց չի կրնար անոր մէջ հոգեւոր կեանք ստեղծել, եթէ անիկա ընդունակ չէ իր մէջը մշակելու զայն:

Բարոյականութիւնը նմանապէս հոգեւոր կեանք չէ: Օր մը Յիսուսին քով երիտասարդ մը եկաւ, և ըսաւ, «Ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանք ունենամ»: Ասիկա հարուստ ու ազդեցիկ մէկը ըլլալով հանդերձ էր նաև «ոմն օրինական»: Օրէնքին իրմէ պահանջած բոլոր պայմանները լրացուցած ըլլալով ծանաբանեայ պատուիրանքներն ալ պղտիկուց ի գործ դրած էր, ուրիշ խօսքով, բարոյական բարձր կեանք մը կ'ապրէր, բայց կրկին ներքին գոհացումէ զուրկ էր, և կը զգար թէ բան մը պակաս էր իր մէջը: Այդ պակասը հոգեւոր կեանքն էր: Հոգեւոր կեանքը թէև բարոյականութիւնը կը պարունակէ իր մէջը, սակայն բարոյականութիւնը հոգեւորը չի պարունակեր: Այս մասին աւելի յստակ ընելու համար մեր ըմբռնումը, պէտք է հզօր շեշտով յայտարարել թէ հոգեւոր կեանքը հակառակ չէ ո՛չ մտային զարգացումի, ո՛չ բարեկիրթ վարմունքի և ո՛չ ալ բարոյականութեան, բայց ինք ստոնցմէ վեր և աստոնցմէ տարբեր ներքին մշակոյթ մըն է:

Այժմ անդրադառնանք խնդրոյն դրա-

կան կողմին և հարցնենք, ի՞նչ է հոգեւոր կեանքը:

Հոգեւոր կեանքը ֆիզիքական, ընկերային, իմացական և բարոյական կեանքէն տարբեր՝ և անոնցմէ վեր մարդկային հոգիին բարձրագոյն արտայայտութիւնն է: Կեանքը տիեզերքի մէջ ունի իր աստիճանական զարգացումն ու դիմադրողականները: Ինչպէս մարդու մէջ, նոյնպէս բուսական ու կենդանական աշխարհի մէջ կեանքը ունի իր արտայայտութիւնները, սակայն բոյսն ու կենդանին ի վիճակի չեն ապրելու հոգեւոր կեանքը, անոր համար որ զուրկ են զայն ունենալու ու արտայայտուելու կարողութենէն, իրենց մէջ այդ ընդունակութիւնը ի յայտ չէ եկած: Բայց մարդ՝ բնութեան իբրև գերագոյն արդասիք և արարչագործութեան գլուխ գործոցը, օժտուած է հոգեւոր բնազդներով ու կարողութիւններով, որոնք՝ իրեն լաւագոյն ու բնականոն պայմաններուն մէջ, զինքը ի վիճակի կ'ընեն կրելու իր արարչին պատկերը: Հոգեւոր կեանքը այս պատկերին անարգել արտացոլացումն է մարդկային նկարագրին մէջ: Ուրիշ խօսքով, Աստուծոյ կեանքն է մարդու մէջ, և այս իսկ պատճառաւ անիկա կը կոչուի նաև յաւիտենական կեանք:

Յիսուս Նազովրեցին, մեր կրօնքին հիմնադիրը, այս յաւիտենական և կամ հոգեւոր կեանքը թէ ապրեցաւ, թէ քարոզեց, և թէ մեզի ժառանգ թողուց: Ինքն էր բուն այս կեանքը, և այս կեանքին լոյսն ու ճշմարտութիւնը: Ինք կը նկատէր զայն մարդու բնական ապրելակերպէն տարբեր ու անկէ բարձր ճոխ ու առաւել կեանք մը, և հետեւաբար ըսաւ. «Ես եկի զի ըզկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին» (Յովհ. Ժ. 10): Յիսուսի աշխարհ բերած, ապրած ու մեզի ժառանգ թողած այս հոգեւոր ճոխ կեանքը մարդկային յառաջդիմութեան վերելքի սանդուխին վրայ նոր աստիճան մըն է: Բնութեան մէջ մարդն է միայն այն արարածը՝ որ ընդունակ է ապրելու այս հոգեւոր բարձր կեանքը, քանզի մարդ իբրև հոգի, ուրիշ բան չէ բայց եթէ Աստուծոյ հոգիին մէկ կայծը, մասնիկը, անոր պատկերը, ներկայացուցիչը, և միանգամայն վկան այս ընդարձակած աւալ տիեզերքին մէջ:

Եթէ Աստուծոյ դոյութեան համար ուրիշ ապացոյց մը չունենայինք, ինքնին արդէն գոհացուցիչ փաստ մըն էր մարդուն ներկայութիւնը բնութեան մէջ, իբր հոգեւոր էակ: Եթէ տիեզերքի մէջ, որպէս կեդրոն և կեանքի ազդիւր, հոգեւոր մեծ էակ մը գոյութիւն չունենար, անկարելի էր որ մենք ունենայինք այս հոգեւոր կեանքը: Ուստի մարդ, իբր և իր արարչին ձեռակերտը, իր հոգեւոր կեանքով և հոգեկան բարձր յատկութիւններով Աստուծոյ համար օտար մէկը չէ, հապա անոր զաւակը ու ժառանգը, բայց անկէ կ'օտարանայ երբ ապրի միջակ իր ֆիզիքական կեանքը, հետեւելով իր գետնաքարէ միտումներուն ու հակումներուն: Այլ բառերով, մարդ իբր և մարմին կենդանի է, և կենդանի լման պատկերը, իր անասնական կիրքերով և անձնասիրական բնազդներով, իսկ միւս կողմէն, աստուածային էակ է՝ երբ որ զինքը չըջապատող անասնական կիրքերէն վեր բարձրանալով մշակէ իր բարոյական բարձր կարողութիւնները, և ապրի այս հոգեւոր բարձրագոյն կեանքը: Երկու ծայրայեղութիւններն ալ ուստի կարելի են մարդուն համար, չափազանց անձնասիրական և անասնական դժուէ կեանք, և միւս կողմէն սահմանազանց ազնուութիւն, բարութիւն, և հոգեւոր բարձր կեանքը ապրելու ընդունակութիւն:

Չարաչար կը սխալինք երբ որ կը կարծենք թէ հոգեւոր կեանք ունենալ հակաբնական և տարօրինակ երեւոյթներու ենթակուիլ է: Իրականութիւն է թէ հոգեւոր կեանքը ունի իր յափշտակութիւններն ու տեսիլները, վերացումի վայրկեաններն ու թռիչքները, բայց և այնպէս անոնք բնահոգեբանական երեւոյթներ են պարզապէս, և ոչ թէ բնութեան հակառակ դէպքեր: Ինչպէս ֆիզիքական՝ նոյնպէս հոգեւոր կեանքը, երկուքն ալ բնական են մարդուն համար, երկուքին մէջ ալ տիեզերական նոյն օրէնքներն են որ կը գործեն: Եւ մարդ իր բնականոն վիճակին մէջ է, երբ երկուքն ալ իրարու ներդաշնակօրէն արտայայտէ իր վրան: Եթէ միջակ ապրինք ֆիզիքական կեանքը, միակողմանի է բնութեան հանդէպ մեր դիրքը, իսկ եթէ ապրինք միջակ հոգեւոր կեանքը, և անարգենք ֆիզիքական պարտականութիւն-

ները, պակասաւոր է մեր ընթացքը: Բայց երբ երկուքն ալ զարգացնենք մեր մէջ, ահա՛ այն ատեն է որ կը մօտենանք բնականոն կեանքին: Եւ ինչ որ բնականոն (normal) է, թէ բնութեան հետ, և թէ բնութեան արարչին, Մեծ Հոգիին հետ մեզ ներդաշնակ յարաբերութեան մէջ կը պահէ:

Հոգեւոր կեանքը Աստուծոյ հետ այս ներդաշնակ ապրելակերպն է, ոչ թէ բնական, թէ բանաւոր և թէ անհրաժեշտ է ամէն մէկ անհատին համար որ կ'ապրի ու կը շրջի այս երկրագունդին վրայ: Մեր իրական հաճոյքը, սրտի ներքին գոհունակութիւնն ու անդորրութիւնը, և յաւիտենական երջանկութիւնը այս տեսակ բնականոն կեանքի հետեւելուն մէջ է: Ինչպէս ֆիզիքական նոյնպէս հոգեւոր կեանքը ունի իր ծնունդն, աճումն ու արտայայտութիւնը:

Քանի՛ որ Աստուած է բացարձակ ազնուութիւնը հոգեւոր կեանքին, հետեւաբար այս կեանքը կը ծնի մարդու մէջ այն վայրկեանին, երբ նա Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ գրուի: Ժողովրդային լեզուաւ ասիկա կը կոչուի հոգեւոր արթնութիւն, իսկ Ս. Դրոց բառերով, վերստին ծնունդ և կամ հոգիով ծնանիլ: Ինչպէս «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէ լուսոյ», նոյնպէս հոգեւոր կեանքը վերէն է, լուսոյ Հօրմէն կուգայ մարդուն: Երբ Աստուծոյ Հոգին զպի մարդու հոգիին, իսկ կոյն անոր հոգին կը նորոգուի, սիրտը կը փոխուի, վարք ու բարքը կը յեղաշրջի, և Աստուծոյ բնութեան հաղորդակից նոր էակ մը կը դառնայ, ինչպէս Պենտեկոստէի օրը առաքեալներ ունեցան նոյն փորձառութիւնը Երուսաղէմի սուրբ Վերնատան մէջ:

Իւրաքանչիւր ոք ունի ընդունակութիւններ ապրելու այս բարձրագոյն կեանքը: Յորենի հատիկին մէջ թաղուն կարելիութիւններ կան իրմէ գուրս նորանոր հատիկներ արտադրելու, պայմանաւ որ յարաբերութեան մէջ գրուի հոգին, օգին, ջուրին և արեւու ճառագայթներուն հետ: Եւ քանի ցորենի հատիկը առանձինն է քան քարաթագոյց է, իր ներքին կարողութիւնները չի կրնար ի հանդէս բերել, և չի կրնար իր լաւագոյն արտայայտութիւնը ցոյց

տալ: Նոյնը շիտակ է մարդոց համար, որոնք օգտուած են հոգեւոր կեանք ապրելու կարողութիւններով: Բայց երբ Աստուծոյ և իրենց մէջ յարաբերութիւն մը չի մշակուիր, քանքարաթափոյց են, և չեն կրնար դուրս բերել իրենց բարձրագոյն արտայայտութիւնը, ուստի և դճաճ կը մնան կեանքի աշխարհին մէջ, չատանալով մինակ ապրուած ֆիզիքական միակողմանի կեանքով մը: Իբրեւ կենդանի, ֆիզիքական կեանք մը ապրիլ առաքելի չէ, բայց իբրեւ մարդ, բնութեան և տիեզերական օրէնքներուն դէմ մեղանշուած է պարզապէս այս տեսակ միակողմանի, պակասաւոր և խեղճուկ կեանքով մը գոհանալ:

Հոգեւոր կեանքը ոչ թէ միակ անհատին մէջ կը ծնի Աստուծոյ հոգիին ազդեցութեան ներքեւ, այլ կ'աճի նաև օր ըստ օրէ: Մանուկը չափահաս ըլլալու կարելիութիւնը ունի իր մէջը, բայց ծնած օրը չի կրնար այդ ընդունակութիւնը ի յայտ բերել, ժամանակի ընթացքին, օր ըստ օրէ, քայլ առ քայլ, յարմար սնունդով կ'աճի և կ'անցնի մանկական տարբեր շրջաններէ, և կը հասնի չափահասութեան: Իրականութիւնը նոյնն է հոգեւոր կեանքի համար ևս: Ինչպէս ֆիզիքական կեանքը սնունդի պէտք ունի, հոգեւոր կեանքն ալ չի կրնար աճիլ առանց սնունդի: Հոգեւոր կեանքին սնունդին ազբիւրը Աստուած է, Աստուծոյ Հոգին է, պէտք է Քրիստոնեայ անհատը Աստուծոյ և անոր Հոգիին հետ յարաբերութեան մէջ ըլլայ շարունակ, պահպանելու համար իր հոգեւոր կեանքը, և աճելու օր ըստ օրէ անոր մէջ:

Հոգեւոր կեանքը ունի նաև իր արտայայտութիւնը և կամ պտուղը: Առաջին դարու մէջ ապրած մեծ առաքեալին բառերը գործածելով, հոգեւոր կեանքի և կամ հոգիի պտուղն է. «Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղուքիւն և ժովկալութիւն, ասոնց դէմ օրէնք չկայ»: Նոյն դարու մէջ ապրած, Քրիստոնէութեան սրբներէն, ուրիշ հեղինակի մը բառերով. «Վերին իմաստութիւնը», այսինքն, վերըստին ծնունդով անհատին տրուած այս կեանքը. նախ՝ «Սուրբ Է, ապա խաղաղաբար, հեզ, հլու, ողորմութիւնով ու բարի պտուղներով առլի, անաչառ ու անկեղծ»: Ուստի

այն որ մշակած է իր մէջը հոգեւոր կեանքը, այս պտուղները կը փայլին իր վրայ, իբրեւ բացայայտ ու լուսաշող առաքիչութիւններ:

Հոգեւոր կեանքի զարգացման ազդակները. — Ինչպէս ականարկուեցաւ, հոգեւոր կեանքի ազբիւրը Աստուած է, ուստի և այդ կեանքը զարգացնելու համար Աստուծոյ հետ շփումը անհրաժեշտ է: Ի՞նչ են այդ ազդակները՝ որոնք հաւատացեալ անհատը Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ դնելով կը նպաստեն անոր մէջ հոգեւոր կեանքի զարգացման:

1. Աղօթքը մին Է այն ազդակներէն: Ըստ Գր. Նարեկացիի, աղօթքը սրտի խորերէն Աստուծոյ հետ խօսակցութիւն է. «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Անհատը՝ իր առանձնական աղօթքով, ինչպէս նաև եկեղեցիի հասարակաց պաշտամունքի աղօթքներուն մասնակցելով, Աստուծոյ հետ կը հաղորդակցի, և Անոր ներկայութիւնը կը զգայ իր մէջը, և որով կը զարգանայ օր ըստ օրէ հոգեւոր կեանքի մէջ: Գր. Նարեկացիին ունէր հոգեւոր այս բարձր կեանքը, և իր հոգեւոր կեանքի այս խորունկութիւնը կը պարտէր մեծապէս իր աղօթասիրութեան: Անիկա հայ բարեպաշտութեան պատմութեան մէջ, Ժ. դարու ընթացքին ապրած, ջերմեռանդ ու սրտաբուխ աղօթող մըն էր, և որքան կ'աղօթէր նոյնքան կը խորունկնար իր հոգեւոր կեանքը: Նոյնը շիտակ է Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի և Ներսէս Շնորհալիի համար: Ասոնք հոգեւոր կեանքի բարձրութեան հասած ցայտուն օրինակներ են:

2. Ս. Գրոց ընթերցումը ուրիշ ազդակ մըն Է: Աստուածաշունչ մատեանը ներշնչարան է հոգեւոր կեանքի: Որքան կարգանք զայն այնքան կը ներշնչուինք անոր հոգեպարար պատգամներէն, եւ կեանքի գոհնիկ մակարդակէն այնքան կը սաւառնինք դէպի վեր, դէպի երկնային ոլորտները, որ կը նպաստէ մեր հաւատքի զօրացման և հոգեւոր կեանքի զարգացման: Ե. դարու մէջ մեր նախահայրերը, Վարդանանց պատերազմի առթիւ, պիտի չկրնային ցոյց տալ հաւատքի այն դիւցազ-

նութիւնը, եթէ աղօթքի զուգահեռական, Ս. Գրոց ընթերցումը մշակուած չըլլար իրենց մէջ: Երբ Ս. Գիրքը հայերէնի թարգմանուեցաւ ժողովուրդը սկսաւ կարդալ զայն, անիկա ոչ թէ իբրեւ Եկեղեցիի գիրք, եկեղեցականները միայն կը կարդային, հապա՝ իբրեւ ժողովուրդի գիրք, ամէն հայ կը կարդար, այրերն ու կիները հաւասարապէս: Հայ Եկեղեցին արգելած չէր որ աշխարհականները չի կարդան զայն:

Ըստ պատմիչ Եղիշէի վկայութեան, տիկնայֆ փափկասունք, որոնք հայ մեծամեծներու և նախարարներու տիկիներն էին, անգաղար Եկեղեցիները կ'երթային, բոլորիկ ու հետիոտն ու կ'աղօթէին: Իրենց օրումները միշտ Սաղմոս կը մումնչէին, եւ մարգարէներու գիրքերէն մխրթաւորութիւն կը ստանային: Հայը հաւատքի այդ թագուն ոյժը այսօր ալ ունի, հիմակ ալ հոգեւոր կեանքի այս խորունկութիւնը կրնայ ցոյց տալ, եթէ Աստուածաշունչ մատենի ընթերցումը տարածուի ժողովուրդին մէջ, և բացատրուի իրեն անոր պարունակութիւնը Ս. Գրոց դասընթացներով և այլ մանկավարժական արդի մեթոտներով:

3. Հոգեւոր գրականութիւնը նաեւ կարեւոր դեր կրնայ խաղալ այս ուղղութեամբ: Եթէ Ս. Գրոց ընթերցումին զուգընթաց՝ ժողովուրդին մէջ հոգեւոր գրականութիւն մըն ալ տարածուի, հոգեւոր կեանքի մշակոյթը աւելի ևս կը քաջալերուի: Կրօնական առողջ դաստիարակութիւնը ժողովուրդին մէջ հոգեւոր իրականութիւններու հանդէպ մեծ հետաքրքրութիւն առաջ կը բերէ, անհատները Եկեղեցիին աւելի կը մօտեցնէ, և հոգեւոր եռանդ ու խանդավառութիւն կը ստեղծէ: Նարեկէն, Ժամագիրքէն աշխարհաբարի վերածուած կարգ մը մասեր, հոգեւոր կեանքը զարգացնող վէպեր, աղօթքներ, հայ և օտար եկեղեցական հայրերու կենսագրականներ, ինչպէս նաեւ թարգմանիչներու կեանքէն և վարդապետաց պատերազմի դրուագներէն առնուած կտորներ, երբ որ գրքոյկի մը ձեւով հրատարակուին ու ժողովուրդին մէջ տարածուին, կ'ունենան անոնք անկասկած իրենց շօշափելի արդիւնքները: Նոյնպէս հոգեւոր թերթեր, թերթիկներ, պարբերա-

կաններ ևս մեծ դեր կը կատարեն այս տեսակէտով:

4. Քարոզախօսութիւնը ուրիշ ազդու միջոց մըն է: Բեմը ոյժ մըն է, և ոչ ոք կրնայ ուրանալ բեմին յեղաշրջող ոյժը: Քարոզախօսութեան միջոցաւ ժողովուրդը ոչ միայն հոգեւոր իրականութիւններու հանդէպ տեղեկութիւններ ձեռք կը բերէ և կը դաստիարակուի հոգեւորապէս, այլ նաեւ կը ստանայ հոգեւոր ոյժ, ներշնչում և պատգամ: Քարոզիչը բեմին վրայ պատգամաբեր մըն է, որքան իր պատգամը սրբաւորուի է, ուժեղ ու ներշնչող, նոյն համեմատութեամբ ժողովուրդը աւելի կ'ողբերուի ու աւելի կը խանդավառուի: Եթէ քարոզիչը պատրաստուած է իր գործին համար, և գիտակից՝ իր պաշտօնին, բեմին վրայ հրաշքներ կրնայ գործել: Ըստ Գործք Առաքելոցի արձանագրութեան, Պետրոսի մէկ քարոզութեամբը երեք հազար մարդիկ դարձի եկան:

Բեմին ոյժը նախկին քրիստոնեաներուն կողմէ այնքան գնահատուեցաւ որ առաջին օրէն, Քրիստոնէական կրօնի շարժումին հետ զուգընթաց, բեմասացութիւնը սկսաւ մշակուիլ ամենուրեք, տարածելու համար այս նոր կրօնքին պատգամները, և զարգացնելու հաւատացեալներուն մէջ հոգեւոր կեանքի մշակոյթը: Բեմին դերը ներկայիս աւելի զարգացած է, և Եկեղեցիին ազդու միջոցներէն մին է հոգեւոր կեանքի ուսուցումները ժողովուրդին մէջ տարածելու համար, եթէ մենք տանք անոր այն կարեւորութիւնը, որուն նա արժանի է իսկապէս:

5. Հոգեւոր կազմակերպութիւններ: Աստուծոյ ևս մեծ դեր կրնան խաղալ այս ուղղութեամբ հոգեւոր կեանքի զարգացման գործին մէջ: Կիրականօրեայ դպրոցը այս կազմակերպութիւններէն մին է, հոն չափահասներու համար ալ կրնայ դասընթացքներ հաստատուիլ: Նմանապէս Եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ կազմուած երիտասարդաց ընկերութիւններ, արանց և կանանց եկեղեցասիրացներ հոգեւոր կեանքի մշակոյթը առաջ տանելու տեսակէտէն բազմաթիւ օգտակարութիւններ ունին: Այս հոգեւոր կազմակերպութիւններ եթէ լաւ ծը-

բազրով, ազնուացուցիչ ու բարոյացուցիչ մեթոտներով առաջ տանին իրենց դասախոսութիւնները, կրթական և ընկերական ձեռնարկները հոգեւոր մշակոյթի մեծագոյն ազդակները կրնան հանդիսանալ:

Հոգեւոր կեանքը եւ Եկեղեցին. — Ի՞նչ է հոգեւոր կեանքի Եկեղեցին հետ ունեցած առնչութիւնը: Եկեղեցին Քրիստոնէական կրօնի այն հաստատութիւնն է որ առաւելագէտ կը դրադի հոգեւոր կեանքի այս մշակոյթովը: Երբ երեխայ մը կը մկրտուի, կը դրօշմուի ու կը յանձնուի Եկեղեցին, այդ վայրկեանէն սկսեալ Եկեղեցին պատասխանատուութիւն մը կը ստանձնէ այդ Քրիստոնէութեան նուիրուած երեխային հանդէպ, մշակելու համար անոր մէջ այս բարձրագոյն կեանքը:

Մասնակը մինչև իր քսան տարեկան հասակը կ'անցնի հինգ տարբեր շրջաններէ, ա. շրջանն է (1-5 տարի), բ. շրջան (6-8), գ. շրջան (9-12), դ. շրջան (13-16), և ե. շրջան (17-20): Այս շրջաններուն իւրաքանչիւրին մէջ, ըստ արդի հոգեբանութեան, մանկան մէջ կ'արթննան նորանոր բնագոյներ, որոնք իրենց արթնցած ընկալուչ վայրկեաններուն, երբ մանկավարժական մեթոտներով դաստիարակուին՝ կրօնաշունչ մթնոլորտին ներքեւ, հոգեւոր կեանքը բնական իմն բերմամբ կ'աճի պատանիին մէջ, և մինչև քսան տարեկան հասակին նա արդէն կը տիրանայ քրիստոնէական ազնիւ նկարագրի մը: Եկեղեցին ամենակենսական դերը այս քսան տարուան ընթացքին մանկան տալիք կրօնական առողջ դաստիարակութեան մէջ է: Եթէ սոյն դաստիարակութեամբ Եկեղեցին կրցած է անհատին մէջ ստեղծել և մշակել այս հոգեւոր կեանքը, այլեւս անոր արդիւնաւորումը աեղի կ'ունենայ ինքնաբերաբար:

Ամերիկեան Եկեղեցիներ, մանկան այս հինգ տարեշրջաններու պահանջքը նկատի առնելով, իւրաքանչիւրին համար պատրաստած են կրօնական դաստիարակութեան յատուկ արդի մեթոտներով մասնաւոր դասընթացքներ, որոնց համեմատ կը դաստիարակուի ներկայ սերունդը կիրականօրեայ դպրոցներու մէջ: Եթէ նոր սերունդը հայկական դպրոցներով և քրիստոնէական ազնիւ նկարագրով պիտի մեծնայ, դէթ Ամերիկայի համար, գուրգուրանքի առար-

կայ պէտք է դարձնել մեր կիրականօրեայ դպրոցներու յատալղիմութեան կարեւոր գործը: Եթէ արտի մը մէջ լաւ սերմեր չցանուին, հոն ոչ պիտանի խոտեր ու փուշեր ինքնաբերաբար կը բուսնին: Եթէ մեր նոր սերունդին մէջ Եկեղեցին կը ծուլանայ մշակել հոգեւոր կեանքը, շատ դիւրութեամբ կը նետուին անոնք անհաւատութեան, սկեպտիկութեան և անկրօնութեան գիրկը:

Ինչ որ Եկեղեցիներէն կ'ակնկալուի, նոյնը կ'ակնկալուի նաև հայ ընտանիքներէն և հայ դպրոցներէն: Որպէսզի հայ դպրոցը, հայ ընտանիքը և Հայ Եկեղեցին կարող ըլլան իրենցմէ պահանջուած այս կարեւոր դերը կատարել հայ ժողովուրդի կեանքին մէջ, պէտք է ունենան կրթիչ, ներշնչող ու ազնուացուցիչ մթնոլորտ մը, որուն անմիջական ազդեցութեան ներքեւ մեր նորահաս սերունդը առաջնորդուի բնական իբր բերմամբ Ս. Գրոց ընթերցման, ազօթքի, կանոնաւոր Եկեղեցի յաճախելու, և հոգեւոր կեանքը իր մէջը զարգացնող այլ միջոցներուն: Ընտանիքը, զըպրոցը և Եկեղեցին իրարու լրացուցիչներն ու գործակիցներն են: մէկուն չինածը պէտք է միւսը քանդէ, այլ երեքը ձեռք ձեռքի տուած պէտք է գործեն ու գործակցին իրարու հետ, միեւնոյն նախագծուած ծրագրով, միեւնոյն ուղղութեամբ, թէև իրարմէ տարբեր գետնի վրայ, բայց միեւնոյն ազգային խոչալով:

Ահա՛ այսպէս կարելի է հոգեւոր կեանքի զարգացումը քաջալերել հայ ժողովուրդին մէջ, ի չահ ազգային կեանքի ազնւացման, և ի պայծառութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Յոհաննէ, Գալիֆ.



ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Յ

(ՆԱԽԵՐԳԱՆՔ)

Պատերազմ էր Հաւասփի եւ Հայրենեաց վրկուքեան...
Կ'իջնէր վերջին իրիկունն, ու արիւնները վաղուան
Հորիզոնին վրայ կարծես էին կանխաւ ցոլացած
Փայլասակող, եռացող, բարձրացող առ Աստուած...:

Դաւօր ամբողջ կը դողար՝ իր խոր անունն՝ Աւարա՛յր
Արձագանգուած լրսելով ժամանակին մէջ անծայր...
Դեօր Տրդմուս կը հոսէր՝ պղտոր անունը իրեն
Աղամանդի պէս բարձած, պսպրդալէն, քրքռալէն...:

Հոն գազաթին Մասիսի, հին աստուածները Հայոց
Կը հսկէին համախումբ՝ արձակելով ծուխ ու բոց
Նոր աստուծոյն դէմ ֆէնոս, բայց արեւանդ, անհամբեր...:

Եւ դիմացէն, փաղցրանիստ Արագածին ի վերել,
Քրիստոս իջած, պահուրսած ներմակ ամպի մը ետեւ,
Ինչպէս գիւտերն իր վերջին՝ բազկասարած կ'աղօթէր...:

1928

Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷԷԱՆ

Ծանօթ. — Վերջերս հրատարակուած իր անթիպ մէկ գործէն:



Ա Ն Տ ՈՒ Ն Ի

Աստուած, ջրիւր շատերուն տուն մը, հոգ չէ քէ վարձու,
Որուն սեմէն ըսկըսեալ քաղաւորի պէս են հոն,
Կրնան դընել-վերցընել եւ հաշիւ չեն տար մարդու,
Ուր իրենցն է Առաւօտն, իրենց՝ ամբողջ Երեկոն...

Ինծի՛՜ հազիւ օտարի տան մէջ սենեա՛կ մը օտար,
Ուր ոչինչ իմս է, ո՛չ իսկ այն անկողինն որուն մէջ,
Երագելէ, սիրելէ, գալարուելէ վերջ երկար՝
Կը մեկնի օր մ'ալ հոգին համբորդութեանն իր անկերջ...

Ո՛չ իսկ պատին վրայ անոր՝ հառազայթնե՛րն ինձ ջրիւր,
Ծագած, շարուած հոն մէկ-մէկ, զոր ունենալ աչիս տակ՝
Իմ հոգիիս ու մտիս կեանքի աղբիւրն էր միակ...:

Շուն մը անգամ, երբ կուգայ ցեղէ մը փչ շատ ընտիր,
Իր մընայուն խորեն ունի. ես՝ իմ ձորներս ու թուղթերս
Առած՝ նորէ՛ն կը մտնեմ այս նոր օտար խուցէն ներս...:

1941

ՎԱՀԱՆ ԹԷՔԷՏԱՆ

Ծանօթ. — Վերջերս հրատարակուած իր անոթի մէկ գործէն:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՅՈՒՆԱՏԱՌ-ՀԱՅԵՐԷՆ

ԾԱԾԿԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ

Ծածկագրուած է հետեւեալ տեքստը.

ա) «Պրատոնի: Վասն զի անձամբ ան-
ձին յաղթելն Բան զամենայն յաղթութիւն ա-
ռաջին եւ Բաջ Է»:— Այս նախադասու-
թեան մէջ ծածկագրողը, կամ գուցէ և
ընդօրինակողը, մի տառասխալ է արել —
«անձամբ» բառը ծածկագրել է «ամձամբ»
ձեւով: Նախադասութիւնը, ինչպէս պարզ
երեւում է, վերցուած է Պլատոնից և յիշ-
ւած է նրա անունը՝ «Պլատոն»: Հաւանա-

հատել է և չի բերել ծածկագրողը: Նա-
խադասութիւնը կարելի է թարգմանել հե-
տեւեալ ձեւով. «Ինքդ քեզ յաղթելը (այ-
սինքն՝ քո կրքերը, քո ցանկութիւնները
սանձահարելը, յաղթահարելը) ամէն տե-
սակ յաղթութիւններից առաջին և ամենա-
մեծ յաղթութիւնն է»:

բ) «Որփեւս. մի Տեստմեն անմիտք եւ
աւսեն, եւ այդն ամենայն խուլ եւ համր Է»: Նախադասութեան միջին մասում ինչ որ
աղաւաղում է երեւում — «անմիտք» բա-
ռը կարելի է և կարգաւ «մի ինչ», սակայն,
ըստ բովանդակութեան, աւելի համապա-
տասխանում է «անմիտք»-ը: Նախադասու-
թեան իմաստն այս է. «Անմիտները իրենք
չեն տեսնում, բայց ասում են թէ՛ բոլորը
խուլ և համր են»: Այս հատուածը վերցւած
է Որփեւսից (Օրփէոս), որի անունը յիշուած
է նախադասութեան սկզբում:

գ) «Եւրիպիդես: Հաբեցից առոյս ի-

Վասն զի անձամբ անձին յաղթելն
ԲԱՆ ՀԱՄԵՆԱԻՆ ԻԱՐԹՕՎԵՄԻՆ ԲՐԱԶԷԻ ԵՐ
ԻԱՐԷ Է:
Ի ԿԵՄԵՆԷ ԵՒ ԱՆԵՐԻՄ ԵՒՆԷ, ԴՆ ԵՂԷ
ՄԻՆ ԵԵԱՆԵՆ ԵՐ ԱՆՄԻՒԻ ԲԱՆ. ԵՐ ԱԻՄՆ
ԵՒ ԱՅՆ ԻՆԷ ԵՒ ԵՄԲ Է
ԱՄԵՆԱԻՆ ԵՐԱ ԵՐ ԽԱՄՔ Է:
Եւրիպիդէս Հաբեցից առոյս Բաւաջի
ԵՒՐԻՄԻՆԻՆ ԶԱԲԵՐՈՒՅ ԲՐՈՒՐԸ ԻԲԱԴԲՈՒՆ
ԵՒ ԶԻՐՈՒՆԸ ԱԵԲԵՐՈՒՅ Ի ԴՐԵՆՈՒ
ՈՐ ԿԵՄԵՆԷ ԳԳՈՒԵ ԴԵԴԱԻԻ ԱԻՄՆ:
ՈՐ Ի ԵՂԷ ԱԵՐԵՄԷ ԶԻՄԵՆ ԿԵ-
ՐԱԶԷԻ
ԲԱՌԷ.
ԱՐԵԳԴԱՆ ԿՈՒՐԱՅ ՕՉ ԵԴԳԷ ԵՐ ՕՉ
ԵՄԵՐ
ՄԵԴԱՆԷ
ԲԷ ԴԿԻՐ ԵՒ ԸՆԹԵԳԻՐ
ԲԷ ԵԳԵՏ՝ ՅԻՄԱՐԵԳԻՐ

կան է, նախադասութիւնը սկզբից թերի է,
այլապէս նա չէր սկսի «մասնով» բառե-
րով: Այդ բառերը ցոյց են տալիս որ յա-
ջորդ ծածկագրուած բառերը հետեւութիւն
են այն նախադասութեան, որը անդամա-

բաւաջիկ եւ զորուն անեցից ի պղծոց»: Այս նախադասութեան «արոր» բառի մէջ
մենք «յ» ենք աւելացրել, որովհետեւ այս-
տեղ խօսքը «արոր»-ի մասին չէ, այլ «ա-
րոր»-ի: «Արոր» նշանակում է պղնձեայ

գաւազան (տե՛ս «Հայկազեան բառարան» և ակադ. Հ. Աճառեանի «Արմատական բառարան») կամ ոսկին և պղինձն իրար հետ խառնուած մետաղ (տե՛ս «Բառք քերթողական ք Հոմերական տառիցն» — ՀՍՍՌ Մատեն. № 2371, թերթ 184 a): Երկու դէպքում էլ գաւազանի մասին է, իսկ մեր նախադասութեան մէջ նա ունի մոգական գաւազանի իմաստ: Ընդհանուր իմաստը հետեւեալն է. «Մոգական գաւազանով կը խփեմ դռներին և դուրս կանեմ չար աղտոտութիւնը»: «Ահել» բառը նշանակում է «սաստել», «գուրս անել» (օրինակ, Ա. զաթանգեղոսի մօտ՝ «հարուածեալք էին և անեալք»): «Ահել» բառը համապատասխանում է յունարէն *φθεω* բառին: Նախադասութիւնը վերցուած է Եւրիպիդեսից, որի մասին յիշուած է նախադասութեան սկզբում:

դ) «Որ զբարինս գգուէ, առակի լինի»: Ով գրկում է քարը, զօրաւոր է լինում, ուժեղ է լինում: «Ատակ» բառն այստեղ ունի «զօրաւոր» իմաստը (*δύναμις*), օրինակ Եւսեբիոսի Քրոնիկոնի մէջ՝ «չէր աւտակ կշտամբել», այսինքն՝ զօրու չէր կըշտամբելու: Քարը գրկելով իրեն ուժեղ զգալու այս սովորութիւնը հին սովորութիւն է և զրա որոշ հետքերը կան մինչև այժմ Սիսիանի և Խարալազեազի հնաքնակ բնակիչների մօտ:

ե) «Որ ի ծով սեռմանէ, զնկուցս կերակրէ»: Ով ծովը որեւէ բան է ձգում, ձկներին է կերակրում: «Արմանել» բառն այստեղ ձգել իմաստն ունի: Սա ժողովրդական ասացուածք է:

զ) «Արեգակն կուրաց ոչ ծագէ եւ ոչ մհանէ»: Կոյրերի համար արեգակը ոչ դուրս է գալիս և ոչ մտնում: Կոյրերը ոչինչ չեն տեսնում, ուստի և նրանց համար ո՛չ արեւածագ գոյութիւն ունի և ո՛չ մայրամուտ:

Առաջին հարցը, որ ծագանում է մեր առջև ծածկագրութիւնը վերծանելուց յետոյ, այդ այն է, թէ ի՞նչ աղբիւրներից է վերցրել վերծանողն իր բնագիրը — յունարէն, թէ՞ հայերէն: Որ բերուած նախադասութիւնները յոյն հեղինակներից են, այդ անվիճելի է — նախադասութիւններից երեքը պատկանում են Պլատոնին, Որփեւսին և Եւրիպիդեսին: Սակայն նախադա-

սութիւններն այդ աղբիւրների յունարէն բնագրից են վերցուած, թէ հայերէն — ահա այս է, որ մութ է: Մեր համոզմամբ, ծածկագրողն այդ տեքստը վերցրել է հայերէն թարգմանութիւնից:

Իմաստասիրական բովանդակութիւն ունեցող ձեռագրերում մեզ հասել է մի տեքստ, որը կոչւում է «Բանք իմաստասիրաց Արեմացուց» (տե՛ս ՀՍՍՌ Մատեն. № 2273, թերթ 176 a — 186 b) կամ՝ «Հարիւր իմաստասիրաց ասացեալ յաղագս խելաց եւ իմաստութեան» (տե՛ս ՀՍՍՌ Մատեն. № 74, թերթ 254, № 467, թ. 221, № 1681, թ. 251 և այլն): Այս տեքստերը պարունակում են հին գիտնականների բազմաթիւ ասոյթները հասարակական այս կամ այն երեւոյթների մասին՝ կնոջ, առաքինութեան, զինարարութեան, կրօնի և այլնի մասին: Այս տեքստերի մի մասը հրատարակել են վենետիկցիները «Սոփերք»ի առաջին գրքում՝ «Բանք խրատուց նախնի իմաստասիրաց» վերնագրով: Մեր կարծիքով, ահա այս բովանդակութիւն ունեցող բնագրից է օգտուել ծածկագրի հեղինակը: Մենք այդ խմբին պատկանող մի շարք ձեռագրեր նայեցինք՝ նրա բնագիրը գտնելու համար, բայց չկարողացանք գտնել: Այս տեքստը մեզ հասել է անդամահատուած ձեւով: Մեր նայած, ինչպէս և հրատարակած տեքստերը թերի են. մենք համոզուած ենք, որ ծածկագրութեան տեքստն այս շարքի ամբողջական տեքստերում անպայման պիտի գտնուի: Ձեռագրերից մեկում Եւրիպիդեսի հետեւեալ ասոյթը զրտանք միայն, որը ոչ մի կապ չունի ծածկագրուած նախադասութեան հետ. «Եւրիպիդես ասէ. պարտ է մեզ ժողովել ի վերայ ծնոցն նորոյ՝ լալ, ողբալ, քանզի ի չարիս ընթանայ, իսկ վախճանեալսն խընդութեամբ յուղարկել ի հող, քանզի ի չարիցն ազատեցան» (ՀՍՍՌ Մատեն. № 2273, թերթ 181 a):

Մի այլ հարց, որ դարձեալ ծագանում է մեր առջև ներկայ ծածկագրութեան վերծանութեան կապակցութեամբ. այդ՝ ծածկագրութեան ժամանակն է, թէ ե՞րբ է կազմուած ծածկագրութիւնը — ծածկագիրը գրի՞ն է, թէ՞ աւելի վաղ շրջանում է գրուած եղել, և գրիչը միայն ընդօրինակել է: Մենք հակւած ենք մտածելու,

որ ընդօրինակութիւն է։ Այդ մեզ հիմք է տալիս մտածելու յունարէն որոշ տառերի ձեւերը։ Յունարէն ϵ , χ , μ և ν տառերի ձեւերը, ըստ յունարէն պալեոգրաֆիայի, VII—VIII դարի հնութիւն ունեն։ Մենք այդ տառերի ձեւերը համեմատեցինք Գարդ-հաուզենի հրատարակած «Griechische Palaeographie»⁽¹⁾, աշխատութեան վերջում տպուած զանազան դարերի յունարէն այբուբենի տառերի հետ. պարզուեց, որ վերեւ յիշուած տառերի ձեւերը VIII դարից աւելի ուշ լինել չեն կարող։ Դժուար է, իհարկէ, պալեոգրաֆիայի հիման վրայ հաստատուն կոահումներ անել, սակայն, այնուամենայնիւ, յունարէն տառերի հնութիւնն ակնբայն է։

Եւ, վերջապէս, մի երրորդ հարց. ո՞րն է այս ծածկագրութեան արժէքը հայագիտութեան մէջ։ Մեր գրչագրերում ծածկագրերի բազմաթիւ տեսակներ կան։ Դրանց մեծ մասը հաւաքել և հրատարակել է մեծանուն գիտնական ակադեմիկոս Հ. Աճառեանը իր արժէքաւոր «Հայոց գիրը» աշխատութեան մէջ։ Սակայն ո՛չ յարգելի ալիպիպիկոսի և ո՛չ էլ այլ որեւէ հեղինակի հրատարակած ծածկագրի տեսակների մէջ, մինչև այժմ, չի հանդիպել մեզ նման ծածկագիր։ Նման ծածկագիր չի հանդիպել մեզ նաև մեր ձեռագրերում։ Յունարէն տառերով ծածկագրուած՝ այս առաջին ծածկագրութիւնն է մեր մասնագրութեան մէջ։

Ներկայ մեր ծածկագիրն արժէքաւոր է և մի այլ տեսակէտից. նա մեզ հասած հնագոյն հայերէն ծածկագրերից մեկն է։ Մեզ հասած ծածկագրերը իրենց հնութեամբ XIV—XV դարերից գինը չեն անցնում, իսկ սա XIII դարի ընդօրինակութիւն է։ Ամենահին ծածկագիրը, ըստ դոց. Կ. Ղաֆաղարեանի նորագոյն ուսումնասիրութեան, դա Աւանի վիմագիր արձանագրութեան երկլիզուեան ծածկագիրն է⁽²⁾, որը, անվիճելիօրէն, VII դարի հնութիւն ունի։ Աւանի արձանագրութեան ծածկագրից յետոյ, իր

հնութեամբ, գալիս է մեր ներկայ յունատառ-հայերէն ծածկագիրը։

Եւ, վերջապէս, ներկայ յունատառ-հայերէն ծածկագիրը արժէքաւոր է հայ-յունական փոխարարութիւնները, նրանց մշակութային կապը ուսումնասիրելու տեսակէտից։ Մեզ յայտնի էր մինչև այժմ հայատառ-յունարէն մի պատառիկ, որը գրուած է պապիրուսի վրայ VI դարում։ Այդ պատառիկը գտնուած է Ֆրանսիացի յայտնի գիտնական Կարիերի կողմից⁽³⁾։ Այժմ մենք ձեռքի տակ ունենք նաև յունատառ-հայերէն պատառիկ։ Այսպիսով, պարզուած է, որ մեր մատենագրերը չեն սահմանափակուել միայն նեղ տեքստային թարգմանութիւններ կատարելով, այլ գոյութիւն է ունեցել հայ-յունական մշակութային աւելի լայն ու խորը փոխարարութիւններ։ Հարց է առաջանում, յունարէն տառերի այսպիսի դործածութիւնն արդեօք նախամիսրոպեան շրջանում հայ գրականութիւնը յունարէն տառերով գրելու հնագոյն սովորութեան տրագիցիան չէ՞, որ շարունակել է յետագայում ևս։

Ի վերջոյ, անհրաժեշտ է նշել մեր մատենագրերի հետաքրքրութեան լայնածաւալ և բազմազան թեմատիկան։ Զկայ այնպիսի մի հարց, որ մեր հարեւան մշակոյթներին մէջ այս կամ այն չափով արծարծւած լինի հնում և մերօրն անտարբեր գտնուեն։ Սովետական մեր հայագիտութիւնը յարգանքով, երախտագիտական մեծ յարգանքով է վերաբերում մեր պապերի, մեր գրասէր պապերի ամէն մի պատառիկը։ Իմենք յարգանքով ենք վերաբերում դէպի բոլոր նրանց, որոնք չեն անցել լուծեան ճանապարհով և չեն կորել անյայտութեան մէջ, այլ թողել են իրենց գրաւոր յիշատակները — հին-հին դարերից մեզ հետ խօսող, մեր նախնիների յառաջագիմութիւնը պատմող ոսկէ յիշատակները։

ՊՐՈՖ. Ա. ԱՅՐԱՆԻԱՆ

(1) V. Gardthausen, Griechische Palaeographie, Leipzig 1913:

(2) Դոցենտ Կ. Ղաֆաղարեանի ուսումնասիրութիւնը՝ «Աւանի երկլիզուեան ծածկագիր արձանագրութիւնը» վերնագրով, զեռեւս չտպագրուած ժամանակ, հեղինակը տրամադրեց մեզ իր ձեռագիրը՝ ծանօթանալու համար։

(3) Հրատարակուած է Հ. Հ. Տաշեանի «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» աշխատութեան մէջ, Վիեննա, 1898 թ.։

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՔԱՆԻ ՄԸ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌԱՅԵՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ե Ի

ԶՄՇԿԻԿԻ ԿՈՂՄԷ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾԻ ՈՒՂՂՈՒԱԾ

ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՋԱԲԱՆԸ

1. Հասան — Հասան

Մատթէոս Ուռայեցիի ժամանակագրութեան Վաղարշապատի հրատարակութեան մէջ (1898), էջ 213, տող 15, 1076ին Անտիոքի մէջ Վասակ Պահլաւունի սպանիչներուն համար կ'ըսուի թէ «Երկու հատաւք» էին: Եւտոյ, կը պատմուի թէ փլառտոս, Վասակի սպանութենէն քանի մը օր ետք, «ժողով արարեալ զամենայն ազգն Հռոմոց զնենգաւորսն եւ զհատաւքն (էջ 213, տ. 24) արս եւքն հարիւր, եւ պահաւոր ուրեք երթալ ի պատերազմ, եւ արեալ զնոսա ի գիւղ մի... սուր եղեալ ի վերայ կոսորեաց զամենայն հատաւքն (էջ 214, տ. 3) առ հասարակ»:

Աճառեան Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան մէջ, Ա., Վենետիկ, 1917, էջ 193 և Արմասական Բառարան, Դ., էջ 163) հասան բառը կը նկատէ նորագիւտ, երեք անգամ գործածուած Ուռայեցիի մէջ, էջ 213-214, և կը ստուգաբանէ արաբերէն haddād «հրկաթագործ»: Կը հետեւի ուրեք թէ հասան «հրկաթագործ» բառը գտած է միայն Ուռայեցիի մէջ:

Ուռայեցիի Երուսաղէմի հրատարակութիւնը (Պատմութիւն Մատթէոսի Ուռայեցւոյ, 1869, հասան բառին փոխարէն (էջ 256 և 257) ամէն տեղ ունի հասան (այս տարբերակին առաջինը միայն յիշուած է Վաղարշապատի հրատարակութեան էջերուն տակ զրուած ձեռագրական համեմատութեանց մէջ (էջ 113, ծան. 3) — որոնք շատ անխնամ կատարուած են — իսկ վերջին երկուքը՝ ոչ):

Աճառեան ունի նաև հասան բառը (Դ., էջ 155) աշտենաւոր, նիզակաւոր զինուոր» իմաստով, զոր գտած է Նորայրի

Բաղգիրին մէջ (Կ. Պոլիս, 1884) էջ 632 Բ., իբրև միջին հայերէն բառ, hastaire, hastat բառին զիմացը: Աճառեանի այս ցուցմունքէն կը հետեւի նախ թէ իր ուշադրութենէն զրկւած է Ուռայեցիի Երուսաղէմի հրատարակութեան մէջ հասան բառին երեք անգամ գործածութիւնը, որոնցմէ մէկը մատնանշուած է Վաղարշապատի հրատարակութեան մէջ, և յետոյ, թէ այս բառը գտած է միայն Նորայրի Բաղգիրին մէջ: Ուրեքն Նորայրի աղբիւրն ալ Ուռայեցիին է:

Ս. Մալխասեան (Բացատրական Բառարան), հետեւելով անշուշտ Արմասական Բառարանին, երկու բառերն ալ ունի վերը նշանակուած իմաստով:

Նկատելով որ հասան կամ հասան բառը կը գտնուի Մ. Ուռայեցիի մէկ պարբերութեան մէջ միայն, որով կամ հասան պէտք է կարգաւ և կամ հասան, երկու բառերէն մէկը պէտք է ջնջել բառարաներէն: Ինծի կը թուի թէ պէտք է պահել հասանը և ջնջել հասանը:

Արդարև, Ուռայեցիին տողերը բացայայտ են: Փլառտոս, Վասակ Պահլաւունիին սպանութեան վրէժը լուծելու համար, կը հաւաքէ բոլոր Երեսները և եօթը հարիւր հասանները կամ հասանները, զանոնք պատերազմի գաշտը առաջնորդելու պատրուակով, և կը սպաննէ: Արդ, եթէ Փլառտոս «հրկաթագործները հաւաքած ըլլար, պատերազմէն տարբեր պատրուակ մը խորհած պիտի ըլլար կասկած չհրաւիրելու համար իր նպատակին վրայ: «Հասանները, այսինքն «նիզակաւոր զինուոր»ներն են որ կը պատերազմին և ոչ թէ երկաթագործները:

Ուռհայեցիի Ֆրանսերէն թարգմանութեան մէջ⁽¹⁾, որ կատարուած է Բարիդի Ազգային (= Ֆրանսական) Մատենադարանին երկու և Վենետիկի Մխիթարեանց հինգ ձեռագիրներուն⁽²⁾ վրայէն, հաստատուած է որ Ֆրանսերէնի թարգմանուած է *hastaire* բառով (էջ 178)։ Զեռագրական աւանդութիւնն ալ ուրեմն մեծ մասամբ կը հաստատուի հաստատ բառին ճշգրտութիւնը, փոխանակ հաստի։

Dulaurier, իր թարգմանութեան ծանոթագրութեանց մէջ (էջ 412) կ'ըսէ թէ *hastaire* կը համապատասխանէ լատիններէն *hastatus*-ին, և կ'աւելցնէ թէ այս հետեւկազօրքը, որ հոմէական լեզուներն առաջինն էր, իր հին անուանակոչութեամբ պահուած է բիւզանդական բանակին մէջ, երուսաղէմի հրատարակութեան մէջ հաստատ բառին բացատրութիւնը (էջ 561, ծան. 150) քաղուած է Dulaurier-ի թարգմանութենէն։

Հաստս պէտք է որ փոխ առնուած ըլլայ բիւզանդական յունարէնէն — որ, իր կարգին բառը ուղղակի լատիններէնէն փոխ առած էր — և ո՛չ թէ Ֆրանսերէնէն, ինչպէս կը գնէ Աճառեան։ Littré ունի *hastat* բառը, առանց վկայութեան, ինչ որ ենթադրել կուտայ թէ մասնագիտական նոր կազմութիւն մըն է։ *Hastaire*-ին գործածութիւնը ծանօթ է միայն 1549-ին (Dauzab)։ Oscar Bloch-ի և Albert Dauzab-ի Ֆրանսերէնի ստուգաբանական բառարանները չունին *hastat* բառը։ *Haste* (նիզակ) բառն ալ Ժ. Գարէն առաջ գործածուած ըլլալ չի թուիր Ֆրանսերէնի մէջ։

2. Զամեկայն ազգն հոռոմոց զնեցաւորսն եւ հաստսն

Ուռհայեցիի Վաղարշապատի հրատարակութեան ծանօթագրութեանց համաձայն, «զնեցաւորսն եւ զհաստսն» բա-

ռերը կը գտնուին այդ տպագրութեան հիմ ծառայած հինգ ձեռագիրներէն երեքին մէջ (Բ՝ գրուած 1663-ին, Դ՝ գրուած 1647-ին և Ե՝ գրուած անծանօթ թուականի մը)։ Աճ՝ (գրուած 1661-ին) ունի զնեցաւոր հաստսն, իսկ Դ՝ (հին ձեռագրէ մը օրինակուած 1853-ին) զնեցաւորսն հաստսն։

Երուսաղէմի հրատարակութիւնը ունի «զամեկայն ազգն Հոռոմոց զնեցաւոր, եւ զհաստսն»։

Էջմիածնի թիւ 244 (Ա) ձեռագիրն է ուրեմն որ ամենէն աւելի կը մօտենայ երուսաղէմի ձեռագիրներուն, որոնց տարբերակներուն մասին մանրամասն տեղեկութիւններ չունինք սակայն։

Երկու հրատարակութիւններն ալ կ'ըսեն թէ Փիլաոտոս սուրէ կ'անցընէ 700 հաստսները այսինքն նիզակաւոր զինուորները, բայց լուռ կը մնան «Հոռոմոց ամբողջ նենգամիտ ազգին» կրած պատիժին մասին։

Ինքնին բացայայտ չափազանցութիւն մը կը թուի արդէն որ Փիլաոտոս հաւաքած ըլլայ Անտիօքի բոլոր Յոյները³, որոնք քաղաքին մէջ ապահովաբար կարեւոր թիւ մը կը կազմէին. բայց երբ պատմագիրը լռութեամբ կ'անցնի անոնց վախճանին վրայէն, պատերազմի դաշտը առաջնորդուելու պատրուակով՝ քաղաքին բոլոր Յոյներուն հաւաքումը աւելի քան տարակուսելի կը դառնայ։

Հաւանական է որ Ուռհայեցիի սկզբնագիրը այս տեղ, ինչպէս ուրիշ բազմաթիւ տեղեր, խանգարում կրած ըլլայ։ Առանց ձեռագիրներու բաղդատութեան — և գուցէ նոյնիսկ հակառակ ատոր համար ալ — կարելի է զճակասութենէն ըսել թէ ինչ կրնայ եղած ըլլալ հեղինակին սկզբնագիրը։ Հիմնուելով Երուսաղէմի և Վաղարշապատի հրատարակութեան վրայ, կարելի է սակայն երկու վարկած ներկայացնել։

Առաջինը սա թէ սկզբնագրին մէջ կար «նեցաւոր հաստսն» ինչպէս արդէն ունի Էջմիածնի թ. 244 (Ա) ձեռագիրը (աւելի ճշգրիտ՝ զնեցաւոր հաստսն), որովհետեւ հաստատները էապէս նենգամտօրէն վարուած էին։ Զարմանալի է արդարեւ որ «նենգաւոր» որակումը չէ տրուած, ներկայ հրատարակութեանց մէջ, բուն իսկ նենգաւորներուն։ Այս ուղղումով, այդ նախագատութիւնը պէտք պիտի ըլլար կար-

(1) E. Dulaurier, *Chronique de Matthieu d'Édesse*, etc. Paris, 1850.

(2) Այս ձեռագիրներէն մէկուն օրինակութիւնը և միւս չորս ձեռագիրներուն հետ համեմատութիւնը կատարած է Խորէն Գալֆայեան։ Իր օրինակութիւնը պահուած է Բարիդի Ազգային Մատենադարանին մէջ։ Տես նաեւ F. Macler, *Catalogue des Manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale*, № 225.

գալ «գամեմայն ազգն Հոռոմոց զնեցաւոր հաստատան», և հասկնալ «բոլոր նենգամիտ յոյն հաստատաներ»: Ազգն Հոռոմոց պարզապէս պիտի նշանակէր «յունազգի», և պատերազմի պատրուակով հաւաքուած «ամբողջ յոյն ազգին» վախճանին մասին պատմագրին լուսութիւնն ալ պիտի բացատրուէր:

Երկրորդ վարկածը, յանդուգն և նուազ հաւանական, բայց ոչ՝ անկարելի, սա է. «նեցաւոր» սխալ ընթերցում մը կրնայ եղած ըլլալ նիզակաւոր բառին, որ կամ սկզբնագրին և կամ առաջին ընդօրինակութեանց մէջ գրուած կրնայ ըլլալ իբրեւ բացատրութիւն հաստատին, ըլլա՛յ լուսանցքին մէջ կամ այս բառին քով, ըլլա՛յ անոր վերեւը, երկու տողերուն միջև:

Ամէն պարագայի մէջ, ձեռագիրներու տարբերակէն յայտնի կ'երեւայ որ գրիչները, մեծ մասամբ անձանօթ հաստատուն իմաստին, զայն փոխած են հաստի, որ իրենց համար բան մը կը նշանակէր, ինչպէս նաև փոխած են ամբողջ նախադասութեան կազմը: Գրիչ մը (էջմիածնի թ. 240 ձեռագիրը (Գ) նոյնիսկ ստեղծած է նեցաւորանիւս բառը և անգամ մըն ալ հաստաք փոխած է «հաւատացեալսն»-ի (Վաղարշ. էջ 214): Անկարելի է որ նիզակաւոր բառն ալ փոխուած ըլլայ «նեցաւոր»-ի:

3. Անափոռա — Անափոռայ

Ուռհայեցիի թէ՛ Երուսաղէմի (էջ 32, տ. 25) և թէ՛ Վաղարշապատի (էջ 27, տ. 19) հրատարակութիւնները Բիւզանդիոնի Յովհաննէս Չմշկիկ կայսեր կողմէ Աշոտ Ողորմածի (953—977) ուղղուած նամակին մէջ ունին «յանափոռսէն պատուապարիս Դերջանայ, Լեւոնի եւ Տառնոյ զօրավարին ողջոյն եւ ի Տէր խնդալ»:

Աճառեան (Արմասական Բաղարան, Ա., 291) անափոռս բառը կը մեկնէ «բիւզանդական բարձր մի աստիճան» իբրեւ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Ուռհայեցիի մէջ, և կ'ենթադրէ որ անշուշտ յունարէն բառ է, բայց կը պակսի Baillyի բառարանին մէջ, իբրեւ յետին բառ:

Dulaurier, Ուռհայեցիի թարգմանութեան մէջ, այս բառը կարծած է անձի

անուն և թարգմանած Anaphorden (էջ 23), Ծանօթագրութեանց մէջ (էջ 385, ծան. 19) յիշած է թէ ձեռագիրներէն մէկը ունի անափոռսէն ձեւը⁽³⁾:

Ն. Ադոնց, որ Չմշկիկի կողմէ Աշոտի ուղղուած նամակին վերջին մասը ուսումնասիրած, լուսարանած և ուղղած է⁽⁴⁾, անափոռսը կ'ուղղէ անափոռայ, յն. ἀναφορὰ «տեղեկագիր», և ամբողջ նախադասութիւնը կը թարգմանէ «Դերջանի պատու թաթրին՝ Տարօնի զօրավար Լեւոնի⁽⁵⁾ տեղեկագրէն», իսկ «ողջոյն և Տէր խնդալ»ը, որ նախորդ բառերուն կը յաջորդեն, կը նկատէ տեղափոխուած բառեր, որոնք նախապէս «յանափոռայէն»էն առաջ կը գրուելէին:

Այս գոհացուցիչ սրբագրութեամբ հարկ է անափոռս բառն ալ քննել հայ բառարաններէն:

Աճառեան (Ա., 291 և Հայերէն Նոր Բառեր Ան, Ա. 124—125) ունի նաև անափոռայ, զոր գրած է Անանուհ ժամանակագրութեան մէջ (Վենետիկ, 1904, էջ 27 և 78)⁽⁶⁾, ինչպէս որ զայն հոն գրած է Ադոնց ալ: Աճառեան անափոռային կուտայ հետեւեալ իմաստները. «զիմուսն բարձրագոյն իշխանութեան, աղերսագիր, ևն»: Թէ՛ Անանուհ ժամանակագրութեան և թէ՛ Ուռհայեցիին մէջ անափոռային աւելի համապատասխան կը թուի «տեղեկագիր» (rapport) բառը:

4. Բառասուն հազար ովուլան — Բառասուն հազար սովօյսն — խոսվուլան

Նոյն նամակին մէջ, Ուռհայեցիի Երուսաղէմի հրատարակութիւնը (էջ 33) ունի զբառասուն հազար ովուլան և ծանօթագրութեանց մէջ (էջ 551, ծան. 35) կ'ըսէ. «Յօրինակն զխոսվուլան, զոր պարտ էր գրել զխոս. ովուլան: Իսկ ովուլոն է սեռական ովուլոս բառին որ նշանակէ դանկ, ստակ»: Վաղարշապատի հրատարակու-

⁽³⁾ Նոյնը կրկնած է Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens, I. p. 20:

⁽⁴⁾ N. Adontz, «Notes arméno-byzantines». II. La Lettre de Tzimisces au roi Ashot (Asot)» (Byzantion, IX, 1934):

⁽⁵⁾ Այս նոյնացման մասին տես § 4:

⁽⁶⁾ Վերջին էջին մէջ՝ անափոռայ:

թիւերը, էջ 27, ունի «գլխաւսումն հազար ուսկօլօն»¹։

Այս ծանօթագրութիւնը ցոյց կուտայ թէ Երուսաղէմի ձեռագիրներէն ոմանք ունէին «գլխովուլաւն», — հաւանաբար «գլխովուլաւն» — և հրատարակիչն է որ զայն փոխած է «գլխ. ուլուլաւն»-ի, անկասկած հետեւելով Dulaurierի թարգմանութեան, որ ունի «les 40,000 oboles» (էջ 24)։ Dulaurier իր ծանօթագրութեանց մէջ կ'ըսէ թէ (Չմշկիկի նամակին) «հայ թարգմանիչը իր թարգմանութեան մէջ պահած է այս յունարէն բառը սեռական հոլովով, obolou, որ անշուշտ գոյութիւն ունէր (յունարէն) բնագրին մէջ։ Նոյնը կրկնած է Documents Arméniensի մէջ, I, էջ 2։

Ն. Աղոնց (անդ, էջ 375) իրաւամբ դիտել կուտայ թէ Չմշկիկ Հայոց թագաւորէն կը պահանջէ իր զօրավարին յանձնեն 40,000 օվոլոս (obole), որ շատ աննշան դումար մըն է, նոյնիսկ եթէ ենթադրուի նաեւ թէ այս դրամը (տրախմիին մէկ վեցերորդը) ընթացիկ գործածութիւն մը ունէր բիւզանդական կայսրութեան մէջ։ Հետեւաբար, հիմնուելով Երուսաղէմի ձեռագիրներուն վրայ⁽¹⁾, որ ունին գլխովուլաւն, բառը կ'ուղղէ գլխովուլաւն, յն. χρυσόβουλων (chrstobulle) «ոսկեբուլ» կամ «ոսկեվուլ»։ «Քաւասումն հազար ուլուլաւն»-ի կամ «սովօլօն»-ի փոխարէն, պէտք է ուրեմն կարգաւ միայն խ(ը)ռ(ը)ս(ը)վուլաւն։

Աղոնց իր այս ուղղումը կը հաստատէ նաեւ Սմբատ Գունդոստապլի Տարեգիրին մէկ հատուածովը։

Յայտնի է թէ Սմբատ Սպարապետի (ժ.Կ. դար) Տարեգիրքը (հր. Շահնազարեան, Փարիզ, 1857) կամ Պատմութիւնը (հր. Ռ. Գ. Յովհաննիսեանց, Մոսկուա, 1856) համառօտագրութիւն մըն է Մ. Ուռհայեցիի գործին, և, հետեւաբար, կրնայ ծառայել վերջինին սխալները մասամբ ուղղելու կամ անհասկնալի մասերը լուսաբանելու։

Այդ Տարեգիրքին մէջ (էջ 36 = Պատմութիւն, էջ 17) կը գտնենք. «Գրեաց (Չմշկիկ) եւ ի պոօրոսպարսն եւ ի Տարօնյ զօրավարն զի արցնէ առ քաղաւորն Հայոց Առն գլխաւսումն եւ զգեկան ոսկի երեսուն հա-

զար, ևն»։ Աղոնց այստեղ դիտել կուտայ թէ Սմբատ սխալած է պոթօսպարսը և Տարօնի զօրավարը երկու տարբեր անձեր կարծելով, մինչդեռ նոյն անձն են։ Ասկէ զատ, կ'ըսէ, ըստ Սմբատի, Տարօնի զօրավարը Չմշկիկէն պաշտօն կը ստանայ Աշոտին յանձնել «խոսաֆուլ»ը և նուէրներ, զոր կը թուէ, մինչ Ուռհայեցիի մէջ այս մասին խօսք չկայ։ Աղոնց կը հարցնէ հետեւաբար թէ արդեօք Ուռհայեցիի ներկայ բնագիրը աղաւաղուած է թէ Սմբատ ուրիշ աղբւրքէ մըն ալ օգտուած է, և աւելի ճշմարտանման կը նկատէ առաջին ենթադրութիւնը։ «Սմբատ, կ'ըսէ, անտարակոյս մեր ունեցածէն աւելի ճիշդ Ուռհայեցիի ձեռագիր մը ունեցած է ձեռքին տակ»։

Աղոնցի ենթադրութիւնը բոլորովին ճիշդ է. բայց զայն հաստատելէ առաջ, պիտի ուզէի ըսել թէ շատ դիւրաւ կը բացատրուի որ Սմբատ երկու տարբեր անձեր կարծած ըլլայ պոթօսպարսը և Տարօնի զօրավարը, եթէ Ուռհայեցիի ներկայ բնագիրը ունէր աչքի առջև։ Ուռհայեցի կը գրէ. «յանափոռայէն պոսոսպարին Դերջնայ Լեւոնի եւ Տարօնյ զօրավարին», և ընթերցողը եթէ չգիտնայ թէ պոթօսպարսը և զօրավարը նոյն անձն են, որովհետեւ Դերջան և Տարօն մէկ վարչական բաժանում կը կազմեն⁽²⁾, երկուքը տարբեր անձեր կրնայ կարծել շատ դիւրաւ և թերեւս միայն այդ կարծիքը կրնայ ունենալ։

Բարիկ

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդ բլուով)

(¹) Տարօն, Աշոտ իշխանին մահէն ետք (966) կցուեցաւ բիւզանդական կայսրութեան և Դերջանի (Derxène) հետ վարչական միութիւն մը կազմեց, զօրավարի մը, այսինքն զինուորական հրամանատարի մը (stratège) իշխանութեան տակ։ Պրոտոսպարս լեւոն այդ պաշտօնը վարող անձն էր (Աղոնց, անդ, էջ 373)։ Վարդաֆոկասի (Bar-das Phocas) մահէն ետք, իր կողմնակիցներէն մէկը՝ Զորդուանիլ (Մագիստրոս այդ շրջանը գրաւեց, ըստ Ասողիկի (Գ. 27, էջ 251)։ Ուրեմն 990-ին Տարօն և Դերջան միացած էին (Աղոնց, անդ, էջ 376)։

(²) Աղոնց ձեռքին տակ ունեցած չէ վաղարշապատի հրատարակութիւնը։

ՆՈՐԱՅՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ



Նորայրի այցեռմար եւ վեցենիկի համակադրումների հաւաքումն: — «Բազմավեպ»ի առթիւ: — Կարապետ Կոստանեան: — Մեսրոպ Վարդ. Տէր-Մովսեսեան եւ Սոկրատ Սփոյանիկոս: — Գլխիկ Լուսինեան: — Խաչատուր Յովհաննիսեան: — Միխայիլ Թամազեան եւ Խորենացու Պատմութեան Լամբրոնացու ձեռագիրը: — Սմբատ Շահագիկ եւ Սամուելի Նամակներ: — Լեւոն Մսերեան: — Սահակ Եպիսկոպոս Խաչապետ: — Կարապետ Եղեան: — Կարապետ Կոստանեան: — Կարապետ Բասմաջեան եւ Պատմութիւն Ճրա Սպորտիստի: — Գարեգին Վարդ. Յովսէփեան եւ Սարգս:



Նորայր Բիւզանդացու անտիպ գրական ժառանգութեան դժբաղտ բաղտի մասին արդէն բաւական գրած եմ Սփիւռքի պարբերականներում: Նորայր իրաւունք ունէր տրամադրել իր 150 հազար շվեդական քրօնն (35 հազար տոլար) հարստութիւնը ըստ իր բարեհայեցողութեան ու նուիրել շվեդական Ֆրեդրիկա Բրեմեր Կանանց Բարեգործական Ընկերութեան. բայց թող եմ տալիս ինձ նկատել, — որքան էլ յարգելի լինէր ամէն մարդու վերջին կամքը բոլորիս համար, — թէ նա բարոյական իրաւունք չունէր իր կէս դարուայ գրական-գիտական աշխատանքների արդիւնք ձեռագրերը կտակել շվեդ կանանց հաստատութեան, երբ մենք ունէինք էջմիածին, Երուսաղէմ, Բարեգործական եւ այլ ազգային հաստատութիւններ: Շվեդ կանայք չգիտէին ի՞նչ անել ու ի՞նչպէս ազատուել Նորայրեան ձեռագրերից, որոնք անպէտք թղթերի կոյտ էր թուում նրանց աչքում: Այդ անհեռաւոր ու անզգոյշ կտակի հետեւանքն է, որ Նորայր Բիւզանդացու ձեռագրերի մի մասը ընդմիջտ կորած է, միւս մասը՝ 35 տարի մնացել է անյայտ ու անտիպ, առանց որեւէ օգտակարութեան հայ բանասիրութեան համար, — ուր Նորայր մի բացառիկ հեղինակաւոր տեղ ունէր իր ժամանակի քառասնամեակին (1876-1915):

Չունելով վենետիկի Միլիթարեան միաբանութենէն ու քաջուած ապրելով հեռւոր Ստոքհոլմում, Նորայր ամբողջապէս

նուիրուել էր հայ Մատենագիրների նոր, գիտական հրատարակութեան աշխատանքներին, պատրաստելով «քննութեան, քննադատութեան, հմտութեան նուրբ մաղից» անցած ձեռագիրներ մեր հին մատենագիրների. Նա գտնում էր գիտութեան պահանջներին անբաւարարող Միլիթարեան բոլոր հրատարակութիւնները, — պատմական, լեզուաբանական, աշխարհագրական, բնաբանային, բնագիտական եւ այլն: Միլիթարեանները չհասկացան Նորայրի գիտական ճիշտ մտքի իմաստը, որ նա առաջադրել էր դեռեւս 1875 թուին, — երբ պատկանում էր կաթոլիկ միաբանութեան, — իր հօր քեռորդի Հ. Գարեգին Զահրբանաւեանին Փարիզից ուղղած նամակում: Այնուհետեւ՝ ամբողջ քառասուն տարի չէր դադարել նոյնը պահանջել՝ — արժեքների վերազնադատում, ըստ իր բառացի արտայայտութեան:

Նորայր Բիւզանդացու մեծութեան մի հայ բանասէրի ամէն գիտողութիւն ահագին նշանակութիւն ունէր եւ ունի հայագիտութեան համար: Նա ուղղած ունի քսան հազարից աւելի սխալ ընթերցում կամ սխալ արձագրութիւն մեր գրչագիրների մէջ, — հինգերորդ դարից մինչեւ տասնեւեօթերորդ դարի հայ գրաբարեան հեղինակների: Նա թողել է վեց հասոր, շատ հաստ հատորներ՝ իւրաքանչիւրը հազար էջից աւելի (հինգ հատորը կազմուած, մէկը՝ անկազմ), որոնց մէջ ժողովուած են հայ գրչագիրների մէջ նկատուած սխալները, ուղղելիքները: Նա թողել է մօտ եւան հասոր, մաքուր արտագրուած ու խնամքով կազմուած, հայ յայտնի մատենագիրների գործերի, որոնք՝ կարելի է չկասկածիլ՝ սոսկ արձագրութեան չեն հին ձեռագիրներից, այլ քննական ուսումնասիրութեամբ պատրաստած Հայ Մատենագիրների նոր հրատարակութեան բնագիրներ: Նորայր Բերլինից ստանում էր յատուկ ընկիր քուլթ, իր աշխատանքների վերջնական, մաքուր արտագրութիւնների համար:

Ո՞վ պէտք է, վերջապէս, իր վրայ վերցնի Նորայրի գէթ որեւէ անտիպ աշխատութեան տպագրութիւնը: Կը յաջողուի՞ արդեօք եկող տարին, երբ լրանում է Նորայրի մահուան 35-ամեակը, գէթ որեւէ հրատարակութեամբ յաւերժացնել մեր այդ

մեծ ու դժբաղտ բանասէրի յիշատակը՝ Որդեօք ժամանակը չէ՞ լոյս ընծայել գէթ այն հատորները, ուր ժողովուած են այն քան հազար Նորայրեան ուղղումները, որ հայ մեծ բանասէրը կատարել է հազար երկու հարիւր տարւոյն ընթացքում (հինգերորդ դարից մինչև տասնևեօթերորդ դարը) լոյս տեսած հայ մատենագիրների մէջ։ Եթէ Նորայրեան մատենաշած և քննած քան հազար սխալ ընթերցումների և սխալ արտագրումների գէթ տասն տոկոսը արդարացի լինին (իսկ ես համոզուած եմ թէ Նորայրեան բոլոր զիտողութիւնները չափազանց հետաքրքրական են հայագիտութեան համար), ապա դարձեալ պէտք է շտապել միջոց տալ հայ բանասէրներին տրամադրել Նորայրեան կէսդարեան ուսումնասիրութեան արգիւնքները։

Հայ մտաւոր աշխարհը, իր ժամանակի մեր մտաւորականութեան ամենահեղինակաւոր շերտը՝ Ներսէս Վարժապետեան, Խրիմեան Հայրիկ, Օրմանեան, Սահակ Ոսպայեան, Կարապետ Եղեան, Կարապետ Կոստանեան, Ստեփանոս Մալխասեան, Մանուկ Աբեղեան, Սմբատ Շահադիզ, Մեսրոպ Տէր-Մովսէսեան, Գարեգին Յովսէփեան և այլն, — օտար ամենահեղինակաւոր հայագէտներ՝ Պրօֆ. Ն. Մառ (Պետերբուրգ), Պրօֆ. Միւլլէր (Վիեննա), Պրօֆ. Տէդա (Հոլմ-Պատովա), Նոյնիսկ այնքան ազմակծ Պրօֆ. Կարիէր՝ որին Նորայր համարում էր թղթ հայագիտութեան մէջ, և այլ շատերը՝ չափազանց բարձր էին գնահատում Նորայրի ամէն խօսք հայ բանասիրութիւն հետաքրքրող որևէ հարցի մասին։

Ստորև տալիս ենք մի շարք Նորայրեան նամակներ, որոնք վկայում են այն խոր սէրը ու յարգանքը, որով շրջապատուած էր Սոսկիմովի մեծաւորը Էջմիածնի, Երուսաղէմի, Թիֆլիսի, Մոսկուայի, Պետերբուրգի հայ մտաւորականութեան՝ կողմից, — այն մտաւորականութեան որ հայագիտութեան պարծանքն եղած է իր ժամանակին։ Եւ նմոյշ մը, թէ ինչպէս խոցուած էր Նորայր, վշտացած վնաստիկցիւնների կողմից։

Նորայրեան նամակները տալիս ենք ժամանակագրական կարգով։

1.

Սոսկիմով, 14 Յունուար 1897.

Մեծարգոյ Հ. Սուքիաս Եփրիկեան,

Վաղ ընդունած եմ զՁեր թուղթն անցեալ Հոկտեմբեր 22-ի, որով կը խնդրէք յինչն շուետական նամակագրողներ։ Իսկ այն թուղթն՝ զոր կ'ըսէք թէ երեք ամիս յառաջ (անշուշտ Յունիսի) գրած էք, չհասաւ յիմ ձեռս։ Ես յանժամ ի Պետրբուրգ էի, բայց իմ բացակայութեանս ժամանակ՝ խնամով հսկող կար ամէն նամակներու եւ լրագրերու վերայ որ կը հասնէին իմ անուանս. զՁեր գիրդ չգտայ ի դարձիս։

1879-ին երբ Կ. Պօլիս էի՝ այցելութեան տոմսակներու պէտս ունէի։ Հարցուցի յայլ և այլ Հայ տպարանս քաղաքին, և զին պահանջեցին երկու արծաթ մէճիտիէ, որ չափազանց թուեցաւ ինձ։ Խորհեցայ որ եթէ յանձնէի տպարան վանացդ՝ ոչ միայն աւելի աժան գնով, այլև շատ աւելի գեղեցիկ տոմսակներ կը ստանայի։ Այսու յուսով զիմեցի առ Տպարանապետն, և ընկալայ զհետեւեալ անհաւատալի պատասխանիդ. —

"Վեցեօր, 7 Յունիս 1879.

"Ազնուամեծար Տէր,

"Կը ստիպուիմ ծանուցանելու թէ խնդրած տոմսակդ չենք կրնար տալ յարմար գիւրե չունենալու համար։

"Մաղթելով Հրամանքիդ ամենայն աղէկութիւն, եմ

"Աղօթարար

"Հ. Դաւիթ Նազարէթեան,

"Հր. Մխիթարեան",

Յարմար գրեք չունենալու համար բառերուն ստորագծութիւնն յինչն է։

Եթէ նոյն անձն զիմած ըլլար առ իս՝ խնդրելով շուետական նամակագրողներ, ես՝ իբրեւ մարդ որ միշտ պատրաստ եղած է այլոց ծառայութիւն մատուցանելու ըստ իւրում կարի, զանց չէի ընել զիւր խնդրին կատարել, թէպէտ և կը յիշեցնէի զիւր 1879 Յունիս 7-ի գրածն, զոր պատշաճ համարեցայ հաղորդել Ձեզ։

Ներփակեալ կը գտնէք 1872-1884

տարեաց շուեռական նամակագրողներէն 10 հատ, ամէնն ալ öre (էօռէ), 2, 3, 4, 5, 6, 12, 20, 24, 30, 50: Զանունս խնդրեմ չ'արձանագրէք նուիրատուաց ցանկին մէջ, զի չեմ ուզեր որ յետ մահուս ըսուի թէ նորայր օգտակար եղած է Միաբանութեանդ լոկ շուեռական նամակագրուներ նուիրելով:

Կը խնդրեմ որ ներելով իմ դանդաղութեանս առ ի հաճել զՁեզ, ըսէք ինձ թէ հրատարակեցի՞ք զԲարսղի Վեցաւրէի երկրորդ տպագրութիւնն: Կը խնդրեմ ևս որ յղէք ինձ զՎերջին գրացուցակ Տպարանիդ, զի կ'ուզեմ ստանալ զՁեր քանի մի նոր հրատարակութիւնս: Դարձեալ, ըսէք ինձ: խնդրեմ, թէ ո՛ւր է այժմ Հ. Աթանազիէն Վ. Երամեան*): և եթէ գիտէք զՊետրոսեան Հ. Մաղաթեայ հասցէն՝ հաճեցէք ծանուցանել ինձ:

Իմ Հայբուսակի Քննադատութիւնս ի ստացողէն պիտի յղուէր առ Ձեզ. յղուեցա՞ւ թէ ոչ:

Փոխարէն մաղթելով Ձեզ քաջողջութիւն, մնամ ամենայն մեծարանօք

Նորայր.

R. P. Soukias Ephrikian
Mekhitariste
St Lazar
Venise (Italie)

2.

Սոսկնով, 4 Մարտ 1897.

Մեծարգոյ Հ. Յովհաննէս Թորոսեան
Եւ Հ. Ե. Տայեցի,

Ընկալայ զՇրջաբերականն Բազմավիպի զոր բարեհաճած էիք յղել առ իս յ17 Փետրուարի:

Ես ի տասն ամաց հետէ մշտնջենապէս մեռեալ եմ Ս. Ղազարու Մխիթարեան Միաբանութեանդ. և յայնմ գերեզմանի՝ ուր կամ թաղեալ կենդանութեամբս՝ ոչ ինչ

*) Երեմեան է ուղիղն: (Ծանօթութիւնը Նորայրինն է: Ս. Լ.)

այնպէս սիրելի և ցանկալի է ինձ որպէս միայնութիւն և լռութիւն:

Սորին մեծարանօք

Նորայր.

R. P. Jean Thorossian
Mekhitariste
Directeur du Bazmavep*)
St Lazare
Venise (Italie).

3.

Սոսկնով, 4 Յունիս 1897.

Մեծապատիւ Տէր Կ. Կոստանեանց,

Ընկալայ զՎկայաբանութիւն Գորեայ եւ Շմոնի և զՈւսումնասիրութիւն Խորեհան Մեծ. Գալուստ Տէր-Մկրտչեանի՝ զորս խնդրած էի ի վսեմապատիւ Տ. Յ. Եղեանցէ և Դուք ալ չնորհ ըրած էիք յղել ինձ: Մարտի 1-ին ընկալայ զԱրարատեան Յունուարի, և հետզհետէ կ'ընդունիմ զյաջորդ թիւսն: Կը խնդրեմ որ բարեհաճիք մատուցանել զիմ չնորհակալութիւնս առ Մեծ. Սմբագրութիւն ամսաթերթիդ:

Անցեալ տարուոյ Սեպտեմբեր 21-ի նամակաւս գրեցի Ձեզ Կորիւն Վարդապետի մասին: Կ'աղաչեմ ըսէք ինձ թէ կը տպագրուի՞ արդեօք իմ երկասիրութիւնս և պիտի հրատարակուի՞ ի մօտոյ:

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն և զօրութիւն, մնամ խորին մեծարանօք

Խ. Ծ. Նորայր.

M. Karapet Costanians
Valarsapat (Edchmiadzine).

4.

Սոսկնով, 25 Յուլիս 1897

Մեծարգոյ Տէր Մեսրոպ Վրդ. Տէր Մովսեսեան,

Երէկ ընկալայ զՍոկրատ Սքոլաստիկոսդ, և կը փութամ մատուցանել ձեզ զիմ

*) Նորայր ջնջած է Directeur du Bazmavep բառեր եւ մակագրել Mekhitariste, ցանկանալով ընդգծել թէ գրում է անհատի, եւ ոչ թէ խմբագրին: Ս. Լ.

շնորհաւորութիւնդ եղեցիկ աշխատութեանդ
և զշնորհակալութիւն պատուական նուէրիդ
համար:

Կ'ըսէք ի Յառաջաբանիդ, երես ԽԱ.,
թէ մինչև այսօր ոչ ոք կարողացաւ ջրել
Կարիերի կարծիքը, և յերես ԽԸ.՝ «ոչ ոք
չփորձեց անգամ հիմնովին քննելու պ.
Կարիերի ասածները, նոյն իսկ պ. Նորայր
Բիւզանդը» իմ կարծեաց և համոզմանց.
հակառակ՝ շատ բան կը գրուի ժամանակին
հանդէսներուն և հրատարակութեանց մէջ.
Եթէ ձեռնարկէի քննել և ջրել զայլոց՝ ինձ
համար անընդունելի՝ կարծիս և վարկածս,
հարկ պիտի ըլլար բոլորովին մէկդի թողուլ
զիմ գրական պարագմունս և զբաղիլ օ-
տարաց գործերով: Այժմ երկու երեք ամ-
սուան միջոց պիտի ուսումնասիրեմ զՍոկ-
րատը, և պիտի հաղորդեմ ձեզ զիմ կար-
ծիս, զոր կը փափագիմ հրատարակեալ
տեսնել Արարատ ամսագրի: Ըսէք ինձ
խնդրեմ թէ հաստատ է ձեր բնակութիւն
յէջմիածնի վանս, և կարող եմ յղել անդր
զիմ գրութիւնն առ ձեզ:

Յերես ԶԷ. Յառաջաբանիդ՝ զԱբաս
Գրիգոր նոյն կը համարիք ընդ Գրիգորիսի
Արշարունեաց քոռեպիսկոպոսի: Կը գծուա-
րիմ ձայնակցել ձեզ, զի Ընթերցումաց
Մեկնութեան հայկաբանութիւն շատ սիրուն
է, իսկ Սեղբոսրոսի վարուցն՝ անհարթ և
անհամ: Կարիւնեանցի Մայր Յուցակին մէջ,
յերես 178, թիւ 1608, նշանակեալ է «Գրի-
գորի որդւոյ Աբասայ Պատճառ լայն եւ
նուրբ գրեանց». զոր կը յիշատակէ նաև
Հ. Գար. Զ. ի Հայկ. Հին Դպր. երես 755:
Խնդրեմ քննէք զայս գործ, և զոճն հա-
մեմատէք ընդ Սեղբոսրոսի վարուց: Թե-
րեւս Աբասուն Գրիգոր և Գրիգոր որդի Ա-
բասայ միեւնոյն անձն է. (համեմատէ ի
նախնեաց՝ «Դարեհ Արշամայ, Դարեհ վըշ-
տասպեայ», փոխանակ «Դարեհ որդի Ար-
շամայ, որդի վշտասպեայ», այլովքն հան-
դերձ): Դժուարութիւնն՝ միայն ու սեռա-
կանն է, Աբասու՝ փոխանակ Աբասայ, որ
սովորականն է: Խնդրելի է յայլ գիրս Ա-
բասու սեռական:

Խորին մեծարանօք

Խ. Մ. Նորայր.

5.

Սոսկիմ, 6 Յունուար 1898.

Մեծապատիւ Տէր Գ. Լուսինեան,

Ընկալայ զՁեր պատուական թուղթն
Դեկտեմբեր 22-ի, և զ583-587 երեսս բա-
ռարանիդ, զորս ներփակեալ կը դարձնեմ
Ձեզ: Գրեցի երեք չնչին գիտողութիւնս:
Աւրախ եղայ լսելով որ պիտի հրատարա-
կէք զ'Ա. հատորն. կը մաղթեմ քաջառող-
ջութիւն և զօրութիւն մնացելոցն համար:
Հայքուսակի Բնագրասութեան տէր
էք, և ո՛ւմ կամիք՝ կարող էք տալ զայն:
Ես որ և է առարկութիւն չունիմ:

Խորին յարգանօք մնամ

Խոնարհ ծառայ

Նորայր.

6.

Սոսկիմ, 6 Ապրիլ 1898.

Մեծապատիւ Տէր Ռուսլցչայեց Խաչատուր
Յովնանիսեանց,

Ընկալայ ի ժամանակին զԲեւեռագիր
Արձանագրութիւններ Ռուսաց Հայաստա-
նում զոր բարեհաճած էիք յղել առ իս:
Մասնաւոր հաճութեամբ ընթերցայ զՁեր
վերջաբանին այն հատուածն՝ որ կը գրա-
նուր յերես 62ա, և կը մատուցանեմ Ձեզ
զիմ ջրեմ խնդակցութիւն: Իմ կարծիքս
նոյն է Ձեր կարծեաց հետ, և եթէ ապ-
րիմ՝ կը յուսամ որ մի լիով հրատարակել:

Խորին յարգանօք

Նորայր.

M. le Prof. Christophe Johannessaintz

Institut Lazareff

Moscou (Russie)

(Մնացեալը յաջորդ բիւլով)

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ ՍԻՒՆԵՐԸ

Ներկայութեանն ենք գրական կենդանագրքի մը ա՛յն պարագային ուր ուսումնասիրուած հեղինակն արուեստագէտ մըն է, որուն երկը ճիգ մը կը վկայէ իրագործումին համար գեղեցկութեան զաղափարի մը: Այդպէս են բնականապէս անոնք որ կը պարունակուին «XVII-րդ» և «XIX-րդ դար»-ուն մէջ՝ յօգուածներ Corneille-ին, La Fontaine-ին, Racine-ին, M^e De Sévigné-ին, La Bruyère-ին, Chateaubriand-ին, Victor Hugo-ին, Balzac-ին և այլնին վրայ, Ասոնց կարեւի պիտի ըլլայ կցել ուրիշներ՝ Emile Zola-ի, Paul Bourget-ի, Pierre Loti-ի վրայ, քաջուած Propos Littéraires-ներու շարքէն: Այս կենդանագրքերը սքանչելի են իրենց ճշմարտութեամբ և ճշգրտութեամբ: Անոնց մէջ կը տեսնեն պատկեր մը ոչ թէ պարզուած, այլ՝ գտնուած, ոչ թէ կերպական, այլ՝ անշարժացած յառկանչական և վերջնական գիրքի մը մէջ:

Այս կենդանագրքերուն մեղադրեցին — Victor Giraud-ն է — ինչ որ, մեր աչքերուն գէթ, կը կազմէ մին անոնց գլխաւոր արժանիքներէն՝ գտնուած և անշարժութիւն: Երբ քննադատութիւնը շատ, շատ կայսկան (Statique) է . . . , ան չնստեիր բուսական մօտէն կենեցիկի շարժումին, եղափութեան՝ մտածումի մը, հոգիի մը: Պրիւճեթիւրի գաղափարակցէն այս վերագրումը գործածակի ոչինչ ունի: Բայց հարց է հասկցալի: Ո՛րն է նպատակը որուն համար խանդու է գրական կենդանագրքի մէջ նկարչի: Հետեւիցը չէ, մօտէն կամ հեռուէն, ակնեցիկի շարժումին, այլ՝ արտագրեցը կենեցիկի սպասարկութիւնը: Այդ բանին մէջ կարեւի է յաջողիչ, գիտե՞ք այդ, ինչպէս որ ֆրանսէլ Maîtres de L'heure-ի լեզվովը, և ինչպէս որ ինք ֆրանսէլ շատ յաճախ, Եւրոպայի միջուկը կազմելով յաջողութեան, փոփոխականին, եղափութեան, լեզվական մը քաղաքական գիտագիտ-

թեան մեջ: Բայց մարդ կը վտանգէ, այդ կերպ վարուելով, մատուցանել, աչքերուն, պատկեր մը խիտ և բարդ, և որ կը կորսնցնէ յատկութենէն ինչ որ ան կը թուի չահիլ ճոխութեան տեսակէտէն, այնքան անորոշ որքան հետաքննուած է մօտէն ճշգրտութիւնը: Բայց աւելի լաւ չէ՞, նախ ընտրարար կապուելով գրագէտի մը կամ բանաստեղծի մը հոգիին մէջի կայունին, անոր կազմուածքին և հանճարին մէջի անփոփոխելիին, տալ մեզի անկէ կենդանագիր մը, ուր հաստատուած ըլլայ, մի անգամ ընդ միշտ, անոր իսկական գիտագծութիւնը, սպասուած վաղանցիկ պատահականութիւններէն, արկածականին իշխանութենէն, և մասնակցող, կերպով մը, փառքի մշտատեսութեան զոր կը վայելէ գրագէտը:

Victor Hugo-ի վրայ մագիստրոսական իր ուսումնասիրութեան վերջաւորութեան Ֆակէն կը գրէ՝ «Պիտի ուղէի անոր մասին խօսած ըլլալ ինչպէս մեր գաւազները պիտի խօսէին . . . »: Իր իղձը, հոս ինչպէս այլուր, ինչպէս միշտ, արտասանելն է նոյն խօսքերը որոնք պիտի ըլլան յետագայ սերունդներունը, գուրկ ապերախտութենէն ինչպէս օնախապաշարումէն: Յետագայ սերունդները հեռուէն կը տեսնեն, և ամբողջութիւնը միայն հաշուի կ'առնեն: Քննադատին գրական գիտանկարները մեզի կը թուին սքանչելիօրէն համապատասխան միակ կերպին որով յետագայ սերունդները կը տեսնեն և պիտի տեսնեն գրական անցեալի մեծ գէժքերը, յաւիտենապէս հաստատուած իրենց սովորական գիրքին մէջ, յանկարծակի բռնուած իրենց իսկ մամեղէն մտերիմ յայտնի շարժումին մէջ:

Եթէ Ֆակէի գրական գիտանկարները կը նկատուին իր մամեղէն փայլուն յաջողումներէն, գրութիւններու իր վերակառուցումները կը կազմեն անփրճելիօրէն իր իրական գլուխ-գործոցները: Բայց իր յատկութիւնները հոն կը գտնեն իրենց բնական ու ամբողջական գործածութիւնը: Իր յետադիմացականութիւնը կը գտնուի, ընդարձակ աշխատասիրութեան խիտ անտառին մէջ, գլխաւոր նպատակները, վաղից գաղափարները: Իր նորամտութիւնը կը ծառայէ որովորեալ խառնուրդ նշանները խորհուրդի մը որ ինքզինք կը փնտնէ, որ կը խառ-

խաբէ, որ ինքզինք կը հակասէ, որ երբեմն կը կորսուի: Իր անկուշտ հետաքրքրութիւնը գտնել կուտայ մշտանորոգ հաճոյք մը այս փնտռութիւն մէջ որ յաճախ որսորդութեան կերպարանք կ'առնէ, և այդ հաճոյքը վարդի պէս կը բացուի բարի տըրամադրութեամբ և եռանդով որոնք կ'ոգեւորեն ամենէն զփուլարիմաց նիւթերու պարզումը: Այս հետաքրքրութիւնը, ասկէ զատ, ձեռնարկել կուտայ իրեն անդադար զբաղան նոր քննութիւններու, և փոփոխել կուտայ անհունապէս իր հետախուզութեան առարկան: Համադրական իր սքանչելի կարողութիւնը կը յայտնուի միութեան վերածումով տարբեր կերպարանքներու խորհուրդի մը որ կը խուսափէր մեղմէ կոտորակուած և ցրուած հեղինակի մը զանազան երկերուն մէջ: Իր քննադատական ոգին կ'ըմբռնէ վաղիմաց վստահութեամբ փաստարկութեան մը տկար կէտը, արուեստակեալ զօգուած երկու դադափարներու, թագուռն ճիւղքը մտաւորական լաստակի մը որուն փայլուն ճակատը կը խաբէր բոլոր աչքերը:

Այսպէս կը գտնենք իր երկին մէջ բընազանցական, բարոյագիտական, քաղաքագիտական, բնկերաբանական դրութեանց վերկառուցումներու շարք մը որոնք կը կազմեն այդ հրանայի հետախուզութիւնը «*Politiques et moralistes du XIX^e Siècle*»-ի վրայ, որուն կարելի պիտի ըլլար միացնել «*XVIII^e դարէն քաղուած քանի մը ուսումնասիրութիւններ*»:

Անոնց ո՛չ մէկ նկարագրութիւնը պիտի կրնար տալ գաղափար մը. նոյն իսկ մերձուոր: Պէտք է կարգով զանոնք և խորհրդածել անոնց վրայ, իրազեկ դառնալու իմար վերլուծումի սքանչելի նարպիկութեան, քննադատութեան բացարձակ ուղղամտութեան, համադրութեան սքանչելի կորովին, պարզումին անբաղդատելի պայծառութեան:

Դրութիւններ՝ բնազանցական *Malebranche*-ին պէս, բարոյագիտական Պլատոնին և Նիշէլինին պէս, քաղաքագիտական *B. Constant* կամ *Focqueville*-ին պէս, բնկերաբանական *Fourier*-ին կամ *Saint-Simon*-ին պէս, ծագել կը հազարամեակէն և կը հասնեն:

Բոլոր յատկութիւնները զորս կը պարզէ

ան և զորս թուեցինք, — պարզումի յստակութիւն, ներամտութիւն, վերլուծումի և համադրումի կարողութիւն, իմացականութեան պայծառութիւն —, մեզ կը թուին ծագել միակ աղբիւրէ մը, Ֆակէն ամէն բանէ առաջ, և մանաւանդ *Logicien* մըն է: Իր տիրական կարողութիւնը *logique*-ն է: Խրթնութիւնը ճաշակի թերութիւն մըն է անկասկած և նիշ՝ տկարութեան, այլ և էապէս մեղանշում մը *logique*-ի գէմ, թըշնամի մանուածագատութեանց ուր կը խրի խորհուրդը և կը կորսուի: անաւտոիկ ինչո՞ւ Ֆակէն յօդուած մը միշտ յստակ է: Իմաստասէրի մը խորհուրդին թափանցիլը կը պահանջէ անկասկած որոշ պատրաստութիւն, անկողնակալութիւն, խոնարհամտութիւն նոյն իսկ, որ զիսէ լուծութիւն հարկադրել ծագող առարկութեան, թողելու համար խօսքը հեղինակին որ պիտի պատասխանէ թերեւս անոր, վայրկեան մը ետք, բայց ատիկա կը պահանջէ մանաւանդ *logicien*-ի յատկութիւններ՝ պաղարիւն և չըջահայեաց խելք, փաստերը կըշտող, ապացուցումները գնահատող, զատող՝ ճշմարտութիւնը, անաւտոիկ ինչո՞ւ Ֆակէն յօդուած մը թափանցող և իմանալի է միշտ: Վերլուծումի կարողութիւնն իսկ միայն կիրառութիւն մըն է *logique*-ի նոյն կանոններուն, բարդ տարրերու տարբադրութեան: Ահա թէ ինչո՞ւ Ֆակէն յօդուած մը կը թուի աւելի լաւ ներկայացնել հեղինակի մը միտքը քան հեղինակն ինքն իսկ: ատիկա՞ անոր համար որ քննադատը վերածեց իրենց ամենապարզ արտայայտութեան խորհուրդին գաղափարները: Համադրութեան կարողութիւնը վերջապէս, ան ալ հիմնուած է *logique*-ի վրայ: պէտք է ըմբռնել առնչութիւնները, նմանութիւնները եւ համաձայնութիւնները. պէտք է միացնել, զօգել այս տարրերը որոնք կը ներկայացնեն խնամութիւններ. պէտք է կազմել ամէնը և զայն կենսաւորել չըջագտելով զայն նպատաւոր միջոցորտով մը, գնելով այդպէս կառուցուած շէնքը բարձրագոյն սկզբունքի մը, բնականուր ճշմարտութեան մը հովանիին տակ: Ահա թէ ինչո՞ւ Ֆակէն յօդուած մը կենդանի կը թուի և կը կանգնի մեր աչքերուն առաջ իբր փայլուն պատկերը խորհրդի մը որ կը քալէ:

Եւ թերեւս ներկայութեանն ենք հոս, — կամ գոնէ զայն կ'ընդհամարենք — գաղտնիքին այն շլացումին որուն ենթարկեցին՝ քննադատին վերականգնումները իրեն ժամանակակից և յաջորդ սերունդներու ընթերցողները: Logique-ը ստուգութիւններու աղբիւրն է: Զայն տիրական վարպետութեամբ գործածողը ծնիլ կուտայ, իր նմաններուն հոգիին մէջ, համոզումը թէ ան իրաւ է: Ֆակէն ծնիլ կուտայ այդ համոզումը: Թերեւս կեղծն ունենայ իր հրապոյրը, ու պատրանքն ալ՝ իր կախարդանքը. բայց մարդիկ, ընդհանրապէս, կը սիրեն ճշմարտութիւնը: Զայն իրականութեան հոմանիշ կը նկատեն. կը սխալին թերեւս, բայց սխալ մը զոր պիտի չկրնային վերապահել: Ֆակէն իբրեւ պահպան այդ ճշմարտութեան և մարդկային այդ իրականութեան որ մեզ կը վրդովէ կը բաշխէ շուայօրէն իր ստացած հարըստութիւնները:

Կայ, կը կարծենք, տակաւին ուրիշ պատճառ մը իր յաջողութեան և ազդեցութեան: Քննադատութիւնը, ինչպէս որ ինք կը գործադրէ, մեզի կը թուի սքանչելիօրէն յարմար ֆրանսական գրականութեան էական յատկանիշներուն: Այս գրականութիւնը Mollère-էն մինչև Balzac, կը պարփակէ մեծ ստեղծողներ ու ժողովրդականքի որ կը ժայթքի յորդաշունչ և թարմ, առատութեամբն առողջ աղբիւրներու: Բայց ան կը պարունակէ աւելի՝ երկեր չափի և կշռի պայծառ և պաղարիւն խորհրդի, մտացի, սուր և թափանցող նկատողութեան, ազատ և իմաստուն վերլուծումի: Ան է՝ մանաւանդ, Montaigne-էն մինչև Anatole France, բարոյագէտներու գրականութիւն մը, նուրբ և խոհուն մտքեր, մեծ դիտողներ, ողջախոհ և գործնական մարդեր: Հասկնալու համար նման գրականութիւն մը, ո՛չ ոք Saint-Simon-էն ի վեր աւելի լաւ օժտուած էր քան հեղինակը «XVIII^{րդ} դար»-ու և «Politiques et Moralistes»-ի: Քննադատին բնութեան և գրականութեան յատկանիշներուն այս կցորդութիւնը կը բացատրէ անշուշտ իր յաջողութեան մէկ մեծ մասը:

Սիրաջան ուսումնասիրելով գրագէտները, որոնց յատուկ է գաղափարներ ունենալ, Ֆակէն պարտ էր բերելիլ հարկադրաբար զբաղելու գաղափարներով, նկա-

ԼԵՋՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ^(*)

Ներկայի և անկատարի անմիջական ձեւը Զէյթունում կազմուած է կը մասնիկի կրկնութեամբ. ինչպէս՝ զօ գիփիմ, զօ գուզում, զօ գուզօս՝ կեփեմ, կուզեմ, կուտաս. — անկատարը Հաճինում ունի երկու ձեւ. առաջինը սովորականն է, երկրորդը նրա վրայ աւելացած թուրքերէնի իլլի անկատարի մասնիկը. — ինչպէս՝ գագի՝ կամ գագի՝ իլլի՝ գալիս էի:

Ապառնին երկու տեսակ է Մարաշում. սովորական ապառնի որ կազմուած է բիզէ (պիտի) մասնիկով և անմիջական ապառնի՝ որ կազմուած է իլլի (ուզել) բայով. ինչպէս՝ բիզէ բիրիմ՝ պիտի բերեմ, զիզիմ բիրի՝ անմիջապէս պիտի բերեմ: Հաճինում ապառնի պիսի մասնիկը դարձել է բ, իսկ անցեալ ապառնին կազմուած է թրք. իլլի մասնիկով. ինչպէս՝ բիզգօմ, բիզօմ՝ պիտի երթամ, պիտի գամ, բիշլի իլլի, բիզի՝ իլլի՝ պիտի երթայի, պիտի գայի:

Դերբայի համար ունինք իր, իյ, օծ, մօն ձեւերը. ինչպէս՝ գիրբի է, գիրբի է, գիրոծ է (կերել է), իփմօն է (եփած է):

11. Սիւրիոյ բարբառ. — Հայերէնի ամէնից ալլափոխեալ բարբառն է Սիւրիոյ բարբառը, որ խօսուած են Ասորիքի մի քանի

(*) Շարունակութիւն՝ մեծաճուց հեղինակի Պառմուրիւն Հայ Լեզուի», գործէն (Ի. Դ. Դալիս):

տեղու զանոնք իրենց առնչութիւններով և անդրադարձումներով ընկերային կեանքին վրայ, դառնալու գաղափարներու քննադատ մը, ըլլալէ ետք միասնաբար կամ յաջորդաբար, տեսարան մը և գրական քննադատ մը, կենդանագրող մը և իմացականութիւններու վերականգնացանող մը: Հետեւինք իրենն այս վերջին ասպարէզին մէջ:

ԱՄՓՈՓՅՑ

ՊԱՐԳԵՒ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շարունակելի՝ 13)

հայաբնակ գիւղերում. այն է ձիար-ի Շուշուր ամանի մօտ Արամօ, Կնէյ, Եագուպիէ գիւղերը և Լաթաքիոյ մօտ՝ Ղնէյմիէ գիւղը. այս բարբառով ծանօթ է միայն մի փոքր նմոյշ, որից երեւում է որ բարբառը պահել է հին հայերէնի ձայնաւորները. չունի ա, եօ, իւ ձայնաւորները, բայց հարուստ է երկրարբառներով. ինչպէս՝ ալ, ար, աւ, էյ, ե, ուա: Զայնական փոփոխութեանց մէջ նկատելի են $ա > ու$, $ե > ի$, $ը > ա$, $ի > էյ$, $ու > աւ$ (ինչպէս՝ հուց, բուրք, բէրուն, չուր՝ փխ. հաց. պարտք, բերան, չար, — հո՛ւցա, բէրո՛ւնա, բուրքէ՛րա փխ. հացը, բերանը, պարտքերը, — յերգէյնք, հօքէյն, յէյս փխ. երկինք, հօգին, զխ. — սաւրփ, անաւն՝ փխ. սուրբ, անուն: Նախդիրներից պահպանուած են գ հայցականի համար և ի բացառականի ու ներգոյականի համար. ինչպէս՝ ի գէղէյնքա՝ ի գետին, ի փուրցունքա՝ ի փորձանս, ի չուրքէյն՝ ի չարէն ևն:

12. Արաբկիրի բարբառ. — Այս բարբառը խօսւում է Փոքր Հայքի հարաւային մասում. գլխաւոր քաղաքներն են Արաբկիր, Տիվրիկ, Կիւրին, Տարենաէ, ինչպէս նաև Կեսարիոյ և Եոզղատի գիւղերից մի քանիսը, մնացեալը լինելով թրքախօս: Շրջանիս մեծագոյն կենտրոնը լինելով Արաբկիրը, բարբառը կոչեցինք նրա անունով:

Այս բոլոր տեղերից կան մանր մունր նմոյշներ. մանրամասն քննութեան ենթարկուած է միայն Արաբկիրի բարբառը (Մելիք Ս. Դաւիթ բեկ, Արաբկիրի գաւառաբարբառը Վիեննա 1900):

Արաբկիրի բարբառը ընդհանրապէս զրաբարին հաւատարիմ է. կարեւոր յատկանիշներն են հետեւեալները.

1. Գործիականի մասնիկն է *օֆ*. ինչպէս՝ *ձէռքօք*, *խօսէլօք* ևն:

2. Ներկայի և անկատարի մասնիկներն են *գա*, *գօ*, *գու* նախադաս կամ յետադաս, որոնք ձայնաւորով սկսող բայերի մօտ կրկնուում են. ինչպէս՝ *գէթա գու*, *գօ գէրթամ*, *գա կէրթամ* կամ *գէրթամ գա՝* ըստ տեղոյն:

3. Դերբայի սեռականն է Կեսարիոյ մէջ ուլի. ինչպէս՝ *մնալուլի*, *էրթալուլի* ևն:

4. Անմիջական ներկան և անկատարը կազմուում են *ընը*, *ըր* կամ *ը* մասնիկներով. ինչպէս՝ *գէրթամ ընը*, *գէրթամ նը*, *գէրթա նը*:

5. Ապառնին կազմուում է դի, ձայնաւորի մօտ դ մասնիկով. ինչպէս՝ *դի խմիմ*, *խմիմ դի*, *դէթամ*:

13. Ակնայ բարբառ. — Խօսւում է համանուն քաղաքում և նրա շրջակայ մի քանի հայ գիւղերում: Այս բարբառով գրուած մեծագոյն ժողովածուն է Յ. Զանկեանի Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս 1895. մի լուրջ գիտական ուսումնասիրութիւն ունի Մաքսուդեանց, լը պառլէ արմէնիէն զԱկն, Փարիզ 1912:

Բարբառիս գլխաւոր յատկանիշներն են. Զայնական փոփոխութիւններ. — առնականի առաջ դառնում է *օ*. ինչպէս՝ *ջօնջ*, *օլլի*, *օրդէվ՝* ձանձ, անալի, անձրե. — ու դառնում է իւ, իսկ *ո* և *օ* դառնում են *եօ*. ինչպէս՝ *լութ*, *իւնիս*, *չէօրս*, *դէօս*, *ասէօր՝ ութ*, *ունիս*, *չորս*, *դուս*, *այսօր*: — Բառավերջի *ն*-ի առաջ աւելացւում է յ կիսաձայնը. ինչպէս՝ *մայն*, *դօյն*, *չայն*, *այն*, *ման*, *գոն*, *չան*, *ան*: — Բաղաձայնները ունին երեք աստիճան և նրանց ձայնափոխութիւնը ճիշտ նոյն է, ինչ որ Խաբերդում և Արաբկիրում:

Քերականութեան մէջ արտասովոր նութիւններ չկան. եղածները արդիւնք են ձայնական փոփոխութեանց, բայերի յոգնակի ա. գէմքը վերջանում է *անֆ*, փխ. *ինֆ*. ինչպէս՝ *գիւղէանք*, *բէրանք՝ կուտէինք*, *բերինք*. — ապառնի մասնիկն է դի, ձայնաւորի մօտ դ. ինչպէս՝ *դի բէրիմ*, *գիւղէի*:

14. Սերաստիոյ բարբառ. — Խօսւում է Սերաստիա հայաշատ քաղաքի և նրա շրջակայ քաղաքիւ գիւղերի մէջ: Առանձին ենթաբարբառ է կազմում Բրզնիկ գիւղը:

Այս բարբառով ոչ մի գրուածք չկայ հրատարակուած: Կ. Գաբրիելեան կազմել է մի ընդարձակ ուսումնասիրութիւն, բայց անտպ է գեղ:

Զայնական դրութիւնը բաւական հարուստ է. ունի ա, եօ, իւ ձայնաւորները և ե, ո երկրարբառային հնչումները. վերջինս որ յատուկ է միայն Սեբաստիոյ բարբառին, ունի մօտաւորապէս ուեօ հնչիւնը և գտնւում է միայն շնչոյ տակ: Բաղաձայնները ունին երեք աստիճան և փոփոխւում են ճիշտ այնպէս՝ ինչպէս Խաբերդի բարբառում: Կայ նաև բառասկզբի յ հազար:

Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են՝ Բ դարձած յն. ինչպէս՝ վայն, իրէյն, փափայն՝ վանք, երեք, փափաք. — կը դարձած է յ բաղաձայնից առաջ. ինչպէս՝ բայլա, ձայմը, արջիլ-գղա՝ բակլայ, ձանկ մը, աղջիկ-տղայ. — և դառնում է Ֆ՝ միավանկ բառերի ու ձայնի մօտ. ինչպէս՝ ֆորթ, ֆող, ֆոկ. — և դառնում է յը. ինչպէս՝ դըյնք, հընչէլ, մայլը՝ կտրել, ընտրել, մանդր:

Բայերի ներկան կազմում է յետադաս զը մասնիկով՝ նման կարնոյ բարբառի. ցքէ գը, գէլէ գը, գէրթա գը, անմիջական ներկան կազմում է զօր մասնիկով. ինչպէս՝ բէրէմ գոր, բէրէի գոր. — ապառնի մասնիկն է նախադաս կամ յետադաս բիդի, որ կարող է կրճատուել բի. ինչպէս՝ բի ընենք. — կատարեալի մէջ յոգնակի ա. գէմքի վերջաւորութիւնն է անգ. ինչպէս՝ գ՛րէցանք:

15. Եւզոկիոյ բարբառ. — Խօսւում է եւզոկիա կամ Թագաթ քաղաքում. զաղթականութեան միջոցով տարածուած է մինչև Ամասիա, Մարսան, Օրտու, Սամսոն և Սինոպ: Առանձին ենթաբարբառ ունի Գիրգորէս գիւղը: Բարբառիս ուսումնասիրութիւնը պատրաստել է Յ. Գաղանձեան, որ տալիս է նաև մի քանի նմոյշներ:

Ձայնական դրութիւնը հարուստ է, նոր ձայնաւորներից կայ միայն ա. — ո ունի երկբարբառային ուկ հնչումը. — բաղաձայնների երեք աստիճանները վերածուած են երկուսի. կայ միայն բ, փ, գ, ֆ ևն. — հին հայերէնի թէ թրթռուն և թէ խուլ բաղաձայնները հաւասարապէս վերածուած են թրթռունի:

Քերականութիւնը ընդհանրապէս Պոլսի բարբառին նման է:

16. Զմիւռնիոյ բարբառ. — Խօսւում է Զմիւռնիա և նրա մօտակայ մի քանի հայաբնակ քաղաքների շրջանում. այն է Մանիսա, Գասապա, Մէնէմէն, Պայընարը, Գրգաղաձ ևն: Այս բարբառով ոչ մի ուսումնասիրութիւն չկայ. հրատարակուած է միայն մի կարճ հատուած, որից երեւում է որ բարբառը չափազանց նման է Պոլսի և յատկապէս եւզոկիոյ բարբառին:

17. Նիկոմիդիոյ բարբառ. — Այս հաշառ շրջանը, որ Փոքր Ասիոյ հիւսիսային արեւմտեան ծայրում աննկուն պահել

է հայ լեզուն, երկու գլխաւոր քաղաք ունի. Նիկոմիդիա և Ատարազար: Սրանց շուրջը ցրուած են բազմաթիւ և մեծ մեծ հայ գիւղեր, որոնցից յիշատակելի են Պարտիզակ, Ասլանբեկ, Եալովա, Կեյվէ, Չենկիլէր ևն: Այս զանազան տեղերից կան մանր մունր գրուածքներ, բայց մի ամբողջական ուսումնասիրութիւն չկայ: Ամէնից աւելի ծանօթ է Ասլանբեկի հետաքրքրական ենթաբարբառը, որի մասին ունի մի փոքր ուսումնասիրութիւն (Վե. Նետիկ 1898):

Այս ենթաբարբառը հարուստ է ձայնաւորներիով. բացի ա, եօ, իւ հնչիւններից, ունի մի տեսակ բաց Է՛ և մի ռնգային ա. — բաղաձայնները ունին երեք աստիճան՝ բ, բ', փ. կայ նաև մի տեսակ հաստ լ: — Ձայնաւորների ձայնափոխութեանց մէջ հետաքրքրական է օ դարձած ռնգականի մօտ ա (գամէշ), ա՛ ռնգականի մօտ է, եօ կամ օ. ինչպէս՝ էնիւշ, էնիւն, էնէօթի, էմիւր, մօրյը, ձօրյը, սօրյը, գէօշնալ, էօրլալ, թէօրլը ևն: — Շատ աւելի հետաքրքրական է բաղաձայնների փոփոխութիւնը. ուր որ երկու բաղաձայն կայ միասին, առաջինը կրճատում է. գ դառնում է յ, — ֆ, բ, փ, դ, բ ընկնում կամ նշանակում են կոկորդի սեղմալ ընդհատումով, — և, ջ, չ, ծ, ձ, ց, վերածւում են ժ, օ, գ, ս. ինչպէս՝ հիյ մարդ, շա* փա*գա. ջաժ մը. վէս դգա. լըճ կա ևն:

Քերականութիւնը նման է Պոլսի բարբառին. անմիջական ձեւը կազմում է հայե մասնիկով. ինչպէս՝ գը սիրիմ հայէ, գը սիրէի հայէ. նոյնը Նիկոմիդիայում յօր ձևն ունի:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Երբեմնակէլ)



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

◆ 3 փետր. Ուր. — Երեկոյեան ժամերգութեանէն ետք կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէր-տէրեանի:

◆ 4 փետր. Շբ. — Ս. Սարգսի գորավարին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Սարգիս հնազարեան մատրան մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայ-րամեան:

◆ 5 փետր. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

◆ 9 փետր. Եշ. — Կէսօրէ առաջ, ժամը 11.30-ին, Գեր. Տեղապահ Հօր այցելեցին Միջ. Կարմիր Խաչի ներկայացուցիչներ՝ Պր. Կապա-րիէլ և Պր. Քնէսէվիչ, որոնք զետեղեցին նաև յարգանքի ծաղկեփունջ մը Հանգուեցաւ Տ. Կիւ-րեղ Ս. Պատրիարք Հօր գերեզմանին վրայ:

◆ 11 փետր. Շբ. — Ս. Իսահակյան Պարբերից. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Նորնծայ Հոգ. Տ. Գարեգին Արեւիկայ Գաղանճեան, որ յետ ձեռ-նադրութեան իր երեք շաբաթներու պահեցու-ղութեան շրջանէն ետք, կը մատուցանէր իր անդրանիկ պատարագը, աւրեմբերակալութեամբ իր վարժիչ-ուսուցիչին Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի:

— Գեր. Տեղապահ Հայրը շնորհաւորական հե-ռագրի տուաւ Կ. Վ. Ֆարուք Թագաւորի ծննդեան տարեդարձին առթիւ:

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, ի յիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աս-լանեան ներկայ գտնուեցաւ Փրանչիսկեան միա-բանութեան Նորնծայի Կիւսթոտ Գեր. Հայր Ճիսսինթօ Ֆալիոյի՝ Փրանչիսկեաններու վան-քէն ներս մուտքի հանդիսութեանց:

◆ 12 փետր. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պա-տարագիչն էր Ս. Յարութեան Տաճարի տեսուչ Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան: Մասնաւոր կարգադրութեամբ Ս. Պատարագին կը սպասա-ւորէր Հոգ. Տ. Գարեգին Նորնծայ Արեւիկայ Գա-ղանճեան:

— Յետմիջօրէի, ժամը 3.30-ին, Գեր. Տեղա-պահ Հայրը ընկերակցութեամբ Տ. Տ. Հայրիկ և Միւսոն վարդապետաց, ներկայ գտնուեցաւ Փր-րանչիսկեաններու Նորնծայի Կիւսթոտ Գեր. Հայր Ճիսսինթօ Ֆալիոյի Ս. Յարութեան Տաճար մուտքի հանդէսին:

◆ 14 փետր. Դշ. — Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, Փրանչիսկեաններու Նորնծայի Կիւսթոտ իր առաջին այցելութիւնը տուաւ Գեր. Տեղա-պահ Հօր:

◆ 15 փետր. Դշ. — Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովոյ Հոգեւոր Հարց, փոխադարձ այցելութեան զնաց Փրանչիսկեաններու Գեր. Կիւսթոտին:

— Յետ երեկոյեան ժամերգութեան, կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

◆ 16 փետր. Եշ. — Ս. Վարդանանց գորավարացն. Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արաւմեան, քնարան ունենալով «Եւ յեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ»:

◆ 17 փետր. Ուր. — Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ քաղաքիս Ասորոց Ս. Մարկոս եկեղեցւոյն մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Պարգեւ Վրդ. Վրթանէսեան, քնարան ունենալով՝ «Երանի ուղորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»:

Օրուան արարողութեանց և երթի ու վերադարձի պաշտօնական թափօրներուն կը նախագահէր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան: Ս. Պատարագէն վերջ՝ վարդապետ հայրեր պատուաւորութեան Ասորոց տեսչարանին մէջ:

◆ 18 փետր. Շբ. — Առաւօտեան ժամը 9-ին ի յիմաց Գեր. Տեղապահ Հօր, Ս. Աթոռոյ աւագ թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան ներկայ գտնուեցաւ լատինաց Նորնծայի պատրիարքի ընդունելութեան՝ իրենց պատրիարքարանին մէջ, իսկ ժամը 11-ին ի Ս. Յարութեան մուտքի հանդէսին:

◆ 19 փետր. Կիր. — Բուք քաղեկեցան. վարա-զուրեալ խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

◆ 22 փետր. Դշ. — Երեկոյեան ժամը 7-ին, Գեր. Տեղապահ Հայրը պատրիարքարանի փոքր զանգիւնին մէջ, պատուոյ ընթրիքի սեղան մը տուաւ Պաղեստինի կառավարութեան աւագ քարտուղար Վսեմ. Ճամալ Պէկ Թուքանի, մու-թաւարիք Իսհան Պէկ Հալիմի, Ընդհ. Դասա-խալ Ուալիտ Պէլի և Ս. Տեղեաց քարտուղար Նահիպ Պաւարչիի: Ընթրիքին ներկայ էին նաև միաբան հոգեւոր վարդապետներ:

◆ 23 փետր. Եշ. — Այսօր սկսաւ Մեծ Պահոց յատուկ «եկեղեցէի» ժամերգութիւնները, որոնք պիտի շարունակուին ամէն Հինգշաբթի մինչև Մեծ Պահոց աւարտը:

◆ 24 փետր. Ուր. — Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Ժողովական հոգ. վարդապետներու շնորհաւորական այցելութիւն տուաւ լատինաց Նորնծայի պատրիարք Ամեն. Ալպերթօ Կորիի:

— Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան

տօնին նախատեսակը պաշտուեցաւ Ս. Թորոս Եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեանի:

● 25 Փետր. Եր. — Ս. Թեոփրասի զօրավարին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թորոս Եկեղեցւոյն մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Միւսոն Վրդ. Կրճիկեան: Համաձայն Հաննէ պատմագրի (Յովհ. Եպս. Երուսաղէմացի) Ս. Թորոս Եկեղեցին կառուցուած է Ս. Յակոբի շրջափակէն ներս Կիլիկիոյ Լեւոն Գ. Թագաւորէն, ի յիշատակ իր Թորոս եղբոր որ սպաննուած էր եգիպտացիներու դէմ մղուած պատերազմին մէջ, Եկեղեցւոյ հիւսիսային կողմը, աջակողմեան դռան մէջ, խորշ մը կը ցուցաւ զարդ, իրեն գերեզման Թորոս արքայեղբոր: Եկեղեցին հիմա կը ծառայէ նաեւ որպէս գրչազրաց մատենադարան, Երուսաղէմի վանքին ձեռագիրներուն:

— Յետմիջօրէի, ժամը 2-ին, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր, հոգեւորն վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով իջան Ս. Յարութեան Տաճար, ուր մուտքի «Շրաշափառ»ի հանդիսութենէն և Ս. Գերեզմանի ուխտէն ետք երեկոյեան ժամերգութիւնը և նախատեսակը պաշտուեցաւ վերնատան Բ. Գողգոթայի մեր մատրան մէջ, Ապա, տեղի ունեցաւ երեկոյեան թափօրը Տնօրինական Սրբալաւորներու մէջ:

● 26 Փետր. Կիր. — Արսամման Կիւսկէ. առաւօտուն պաշտօնական զոյգ թափօրներով (առաջինը ժամը 6-ին, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմսանեանի, իսկ երկրորդը ժամը 8-ին, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր) վարդապետ հայրեր իջան Ս. Յարութեան Տաճար, ուր յետ առաւօտեան ժամերգութեան, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ վերնատան մեր մատուռին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան: Ս. Պատարագէն վերջ տեղի ունեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր: Ապա, վարդապետ հայրեր զլիսաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր պաշտօնական թափօրով վերադարձան մայրավանք:

— Յետ երեկոյեան ժամերգութեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ վաղուան տօնին նախատեսակը և Տեառնըդառաջի տօնին յատուկ կցօրդ հանդիսութիւնները, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

Երեկոյին, վանքին բոլոր թաղերուն մէջ կը վառէին տօնին յատուկ խրախճական - նուիրական խորդիկները, միացօրդ մեր հեթանոսական օրերու սովորութիւններուն:

● 27 Փետր. Բչ. — Տեառնըդառաջ, (Տօն քառասորեայ դաւաճանէն Քրիստոսի ի Տաճարն):

հանդիսաւոր Ս. Պատարագը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, մատուց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, Գեր. Տեղապահ Հօր այցելեց լատինաց նորընտիր պատրիարքը Ամեն. Ալպէրթօ Կորի իր հետևորդներով:

— Կէսօրէ առաջ, ժամը 11.30-ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ աւագ թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Ս. Աթոռոյ քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանի, այցելեց Երուսաղէմի Ընդհ. Ամերիկեան Հիւպատոսին:

— Յետմիջօրէի, ժամը 6-ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Պր. Կ. Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Պաղեստինի աւագ քարտուղար Վսեմ. Տամալ Պէկ Թուքանի կողմէ տրուած երեկոյթին:

ՀԱՆԳԻՍ

ԲԱՐՁՐ. Տ. ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ.

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին յղուած հեռագրէ մը, խոր ցաւով կ'իմանանք մահը Ս. Էջմիածնի Միաբաններէն բարձրաշնորհ Տ. Կարապետ Արքեպս. Թումանեանի:

Հանգուցեալ Սրբազանը Վեհ. Տ. Գէորգ Զ. Սրբազնագոյն Հայրապետի ճիգերով 1940էն վերջ վերալազմեալ Ս. Էջմիածնի Միաբանութեան ամենէն աշխատու անդամներէն մին էր: 1945 Յուլիս 1ին ձեռնադրուած էր եպիսկոպոս, Վեհ. Գէորգ Զ. Հայրապետին և նշանակուած Վրաստանի թեմին առաջնորդ ու այդ առթիւ պատուուած արքեպիսկոպոսով:

Ս. Աթոռոյ Պատրիարքական Տեղապահ Գեր. Հօր կարգադրութեամբ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մասնաւոր ճոզհանգստեան պաշտօն Փետր. 12 Կիրակիի Ս. Պատարագէն վերջ:

Արեւ յանուն Գեր. Տեղապահ Հօր և Ս. Յակոբեանց Միաբանութեան կը յայտնէ իր վիշտն ու ցաւակցութիւնը Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին և Ս. Էջմիածնի Պատ. Միաբանութեան, Եկեղեցւոյ հաւատարիմ և զորձունեայ պաշտօնէին վաղահաս մահուան առթիւ:

Օրհնէր իր յիշատակին և երկնային հանգիստ իր հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

1950-ի “ՍԻՈՆ”, ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ԾՐԱՆԱՊԷԿ

Հոգ. Տ. Միլոոն Վրդ. Կրճիկեան՝

Միաբան Տիրացու Ռաֆայէլ Ծէնազեան՝

Տիար Պետրոս Հինգիւան՝

Տիար Ս. Վարժապետեանին (Մարտիրոս)։

» Հայկ Հէքիմպաշեանին (Պոլիս)։

» Նիկողոս Մազմանեանին (Պոլիս)։

Տիրացու Նուպար Շապճեանին (Պոլիս)։

Տիկին Վեհանուշ Ունճեանին (Լոնտոն)։

ՍԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Տ Ե Տ Ր Ա Կ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԱՌՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲՈՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ

ՏՊԵՈՒ ԸՍՏ ՎԱՂԵՄԻ ԿԱՐԳԱՅՈՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՇՏՈՒՄԱՆՑ

ՆԱԽԱԳԱՀ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱՎՈՂՔԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1950

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ



Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ

1949

Էջ՝ 383

Գին՝ 30 Պաղ. Դանեկան